

ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԶ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 12 (306) VOL. XXVI N° 12 السنة السادسة والعشرون العدد الثانية عشر

ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱԶԳԻՍ ԵՒ ՀԱՅՐԵՆԻԹԻՍ



Հ.Մ.Ը.Մ.
ԱԼՄԵԼՕ



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, Պէյրուսի մէջ լոյս տեսաւ միութեան ընդհանուր Ծրագիր - Կանոնագիրին գիրքը, Հ.Մ.Ը.Մ.ի 9րդ Պատգամաւորական ժողովին կողմէ կարգ մը բարեփոխութիւններու ենթարկուելէ ետք:

Գիրքը, Պատգամաւորական ժողովին որոշումով, կը մէկտեղէ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիրը, Կանոնագիրը, Սկաուտական Կանոնագիրը, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու Ծրագիր-Կանոնագիրը, ինչպէս նաեւ միութեան ժողովական եւ վարչական կանոնները:

Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր - Կանոնագիրը որդեգրուած է միութեան առաջին Պատգամաւորական ժողովին, 1974ին: Այնուհետեւ, օրուան պահանջներուն հետ քայլ պահելով, ան բարեփոխ-

ուած է 6 անգամ՝ 1979ին, 1983ին, 1991ին, 1999ին, 2003ին եւ 2007ին, Պատգամաւորական 2րդ, 3րդ, 5րդ, 7րդ, 8րդ եւ 9րդ ժողովներուն կողմէ:

102 էջերով ներկայ գիրքը լոյս տեսած է գեղատիպ կողքով եւ գունաւոր կարգ մը էջերով: Գիրքին առաջին էջերով (էջ 7-8) միութեան Ծրագիրը (Անուն, Նպատակ, Միջոցներ) կը ներկայացուի հետեւեալ ձեւով:-

ԱՆՈՒՆ

ՄԻՋՈՑՆԵՐ

Միութիւնս կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկաուտներ:

Հ.Մ.Ը.Մ.ը իր նպատակը կ'իրագործէ:-

ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է.-

ա) Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,

բ) Սորվեցնել Միութեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,

գ) Ձարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,

դ) Համակել անոնց միտքն ու սիրտը մարզական ազնւագոյն ոգիով:

Ա. Սկաուտութեամբ,
Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

Գ. Դասախօսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,

Դ. Հրատարակութիւններով,


Ե. Ակումբներով եւ մարզարաններով:

Ընդհանուր Ծրագիր – Կանոնագիրի գիրքին PDF օրինակը կարելի է ամբողջութեամբ գտնել Հ.Մ.Ը.Մ.ի համացանցի կայքէջին մէջ՝ www.Homenetmen.org



ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزیک مجله ریاضیه شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Ս.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻՁ. ՏԱՐԻ, 2007, ԹԻՒ 12 (306)



19

Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՔ

- Խմբագրական 2
- Մեր Տեսակցությունները 3
- Գրախօսական 6
- Ապրումներ 9
- Յուշեր 14
- Մասնաձիղէ Մասնաձիղ 19
- Մեր Կորուստները 37



29



24

ՔԱԺԻՆՆԵՐ

- Պատմական 12
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

ԽՄՔԱԳԻՐ
 Վիզէն Աւագեան
 ԽՄՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան
 Սեւան Նազարեան
 «ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Յակոբ Մանուկեան, Չարեհ
 Սափարզեան, Շահպան, Խորէն
 Քիրազեան, Կարպիս Գոյունմեան
 Եւ շրջաններու թղթակիցներ:
 Էջադրում - Չարեհ Չէրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողբի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄՔԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Գինիչեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ
 Լիբանանի մէջ թերթին
 հատվածադրի սակն է 3000 Լ.Ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 Լ.Ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.ի Մեկուսի
 Եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 Եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա Եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

«**Ա**զգային գիտակցություն»-ը յաճախ կրկնուող խօսք մըն է մեր առօրեային մէջ: Միութենական ժողովներու ընթացքին ամենէն շատ արծարծուած օրակարգի նիւթերէն մէկն է անհկա:

Գիտակցի՛ կը նշանակէ ճանչնալ, հասկնալ, դատողութեամբ ծանօթանալ երեւոյթի մը կամ ճշմարտութեան մը:

Գիտակցութիւնը աստիճաններ ունի: Ամէն մարդ նոյն չափով կրնայ գիտակից չըլլալ: Գիտակցութեան մակարդակը կախում ունի տարիքի հասունութենէն, կեանքի փորձառութենէն, մտքի կարողութենէն եւ զարգացումէն:

Կեանքի մէջ գիտակցութեամբ շարժիլը մեծ առաւելութիւններ կու տայ մարդոց, քանի ճամբան լուսաւորող ճրագն է ան, որուն շնորհիւ կարելի կը դառնայ առաջը առնել խարխափումներու եւ սայթաքումներու:

Մարդոց մեծամասնութիւնը, դժբախտաբար, անբաւարար գիտակցութեամբ կը վարէ իր կեանքը: Քիչեր ճիգ կը թափեն խորապէս ճանչնալու իրենք զիրենք եւ իրենց շրջապատը: Այդ պատճառով ալ անոնք կը դիմագրաւեն տեսակաւոր դժուարութիւններ: Այլապէս, ինչքան հարցեր պիտի խնայուէին, եթէ մարդիկ ամբողջական գիտակցութիւնը ունենային իրենց իսկական կարողութիւններուն, ցանկութիւններուն եւ միջոցներուն, առանց թերագնահատելու կամ գերագնահատելու իրենք զիրենք:

Անհատական շահերու եւ ուժերու գիտակցութենէն վեր գոյութիւն ունի հաւաքական ձգտումներու եւ որոնումներու գիտակցութիւն մը: Այս ալ աստիճանաբար կը լայննայ ընտանիքէն դէպի գերդաստանը, գերդաստանէն դէպի միութիւնը եւ ամբողջ ազգը:

Յետեւաբար, ազգային գիտակցութիւն կը կոչուի այն հասկացողութիւնը, զոր անձ մը կը կազմէ ամբողջ ազգի մը պատկանող հասարակաց շահերու եւ իտէալներու մասին:

Եւ դեռ, ազգային գիտակցութենէն վեր կայ համամարդկային գիտակցութիւնը, այսինքն բովանդակ մարդկութեան վերաբերող իրաւունքներու ըմբռնողութիւնը, առանց որուն մարդ միշտ կը մնայ թերի:

Այս բոլորին մէջ, ազգային մտահոգութիւններով, մեզ ամենէն աւելի հետաքրքրողը ազգային գիտակցութիւնն է, որովհետեւ մարդու մը ազգասիրութիւնը կը խարսխուի իր ազգային գիտակցութեան վրայ: Ազգասիրութիւնը ինքնաբուխ զգացում է, որ մարդու մը սրտէն կը բխի եւ մեծ գոհողութիւններու գնով զայն կ'առաջնորդէ նուիրական արարքներու, բայց եթէ ան չամբանայ ազգային գիտակցութեամբ, չի գոյատեւեր եւ պէտք եղած ձեւով չարդիւնաւորի:

Ազգային գիտակցութիւնը որքան զօրանայ միութեան մը կամ ժողովուրդի մը մէջ, այնքան անկերպարան բազմութիւնները կը դառնան միասնական կամքով եւ ապրումներով օժտուած միաձոյլ ազգ:

Ով որ կ'ուզէ իր ժողովուրդին հարազատ եւ օգտակար մէկ անդամը ըլլալ, ով որ իրապէս ազգասէր է, ամենէն առաջ պէտք է խորացնէ իր ազգային գիտակցութիւնը: Պէտք է լաւ ճանչնայ իր ժողովուրդը, անոր Դատը եւ արդար իրաւունքներու հետապնդման պայմանները: Ան պէտք է լաւ ճանչնայ նաեւ իր ապրած գաղութը, գաղութին շահերը, առաջնահերթութիւնները եւ այն բոլոր կարելիութիւնները, որոնք կրնան նըպաստել գաղութին զաւակները հա՛յ պահելու եւ անոնց ներուժը հայութեան հաւաքական շահերուն ծառայեցնելու:

Հարցեր են ասոնք, որոնք կապուած են մարդոց ազգային գիտակցութեան չափին ու որակին, եւ որոնք մեծ նշանակութիւն ունին Հ.Ս.Շ.Ս.ի նման ազգանքէր գործունէութիւն ծաւալած միութիւններու համար, այսօր եւ վա՛ղը:

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՈՒՆԳԱՐԻՈՅ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԵԼՈՎ՝

Հ.Մ.Ը.Մ. ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԷՋ ԿԱՐՈՂԱՑԱԲ ԻՐ ՇՈՒՐՋ ՄԹՆՈՒՈՐՏ ԵՒ ՇՐՋԱՆԱԿ ՍՏԵՂԾԵԼ

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ'ԸՍԷ ՊՈՒՏԱՓԷՇԹԻ
ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ՆԻԿՈՂՈՍ ՅԱԿՈՒԲԵԱՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Պուտափեշթի մասնաճիւղը միութեան նորագոյն մասնաճիւղերէն մէկն է, որուն կ'արժէ ծանօթանալ անպայման, մասնաւանդ որ Հունգարիոյ հայ գաղութը ինքնին նորութիւն է մեզի համար: Կրնա՞ք ամփոփ գիծերով ներկայացնել մասնաճիւղը եւ ցարդ անոր կատարած աշխատանքները:

- Հ.Մ.Ը.Մ.ի Պուտափեշթի մասնաճիւղը հիմնուեցաւ 28 Մայիս 2005ին: Հիմնադիր անդամները՝ ես եւ քանի մը այլ եղ-

բայրներ, շատ լաւ կապեր ունէինք Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղի անդամներուն հետ: Քանի մը անգամ հանդիպումներ ունեցանք իրենց հետ եւ տեսանք, որ Հ.Մ.Ը.Մ.ը շատ լաւ աշխատանքներ կը տանի եւ մենք պէտք ունինք նման աշխատանքներու: Հետեւաբար, կապուեցանք իրենց եւ խնդրեցինք միութեան մեծ ընտանիքին անդամակցութիւնը:

Մեր խնդրանքին պատասխանը չուշացաւ եւ 28 Մայիս 2005ին Պուտափեշթ այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան օրուան անդամ եղբ. Մանուէլ Մարսէլեանը: Իր ներկայութեամբ, Պուտափեշթի քաղաքապետարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան նուիրուած ձեռնարկ մը, որուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղէն 32 քոյր-եղբայրներ եւ Պուտափեշթի գաղութէն 90 հայորդիներ: Ձեռնարկին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին հիմնադիր ժողովը, որուն մասնակցեցան բոլորը, մեծ գոհունակութեամբ ողջունելով այս կարեւոր նախաձեռնութիւնը:

Եղբ. Մարսէլեան Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցելէ ետք, ժողովին ներկայացուց նորաստեղծ մասնաճիւղին վարչական կազմը եւ ատենապետին փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի դրօշն ու կանոնադիրը:



Մասնաճիւղին ֆութպոլիստները (ձախին) Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 30ամեակի «Սուրէն Մուրատեան» մրցաշարին, Փարիզ:

Կը յիշէ՞ք առաջին վարչական կազմը:

- Անշո՛ւշտ: Եղբ. Նիկոլոս Յակոբեան՝ ես ատենապետ, քոյր Հայաստան Աղէկեան փոխ ատենապետուհի, եղբ. Աղամ Սարգսեան ատենադպիր, եղբ. Գագիկ Ճոթեան գանձապահ, եղբ. Յարութիւն Բաբգաբանեան, քոյրեր Էրմոնի Մարթայեան եւ Լիլիթ Ուգամեան խորհրդականներ:

Մասնաճիւղը քանի՞ հոգիով սկսաւ իր աշխատանքներուն:

- 11 հոգիով:

Իսկ այսօր քանի՞ անդամ կը հաշուէ ան:

- Այսօր, իր հիմնադրութենէն երկուքուկէս տարի ետք, մասնաճիւղին անդամներուն թիւը հասած է 40ի: Մասնաճիւղը ունի 11 հոգիանոց վարչութիւն: 2007ին մենք մասնակցեցանք Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի «Սուրէն Մուրատեան» ֆուտբոլի մրցաշարքին, Փարիզ: Կրնանք ըսել, որ Հ.Մ.Ը.Մ. կարճ ժամանակի մէջ կարողացաւ իր շուրջ մթնոլորտ եւ շրջանակ ստեղծել: Բազմաթիւ հայեր, որոնք իրարու չէին ճանչնար, հայութենէ հեռու կը մնային, Հ.Մ.Ը.Մ.-ի աշխոյժ գործունէութիւնը տեսնելով՝ եկան եւ անդամակցեցան մասնաճիւղին:



Հ.Մ.Ը.Մ.ի Պուտայիտշթի ֆուտբոլի խումբը:

Ի՞նչպիսի գործունէութեան կ'ակնարկէք:

- Մարզական գործունէութեան մասին կը խօսինք յատկապէս: Հ.Մ.Ը.Մ. Պուտայիտշթի մէջ ունի ֆուտբոլի խումբ, փինկ-փոնկի եւ ճատրակի մարզիկներ: Շուտով կ'ունենանք նաեւ վոլբոլի խումբ: Մենք վարձած ենք ֆուտբոլի դաշտ, ուր տեղի կ'ունենան մեր փորձերը: Ճատրակի եւ փինկ-փոնկի պարագային, համաձայնութիւններ ունինք դպրոցներու հետ, որոնց սրահներուն մէջ կը կատարենք մեր փորձերը:

Ակնբային յարմարութիւններ ունի՞ք: Ո՞ր եւ ի՞նչպէս կը կատարէք ձեր ժողովները:

- Մեր յարմարութիւնները շատ են, որովհետեւ մենք յատուկ կարգավիճակ ունինք Հունգարիոյ մէջ: Այդ մասին կրնանք առանձին խօսիլ: Ըսեմ, որ պետութիւնը յատուկ կեդրոն մը տրամադրած է Հունգարիոյ Հայկական Ինքնավարութեան: Սկիզբը, մեր ժողովները կը գումարէինք հոն, որովհետեւ մեր անդամները անդամ էին նաեւ Ինքնավարութեան եւ որեւէ հարց չկար այդ գծով: Վերջերս, պետութիւնը տրամադրեց նաեւ երկրորդ շէնք մը, իբրեւ Հայկական Մշակութային կեդրոն գործածելու համար: Հիմա հոն է որ կը գործէ Հ.Մ.Ը.Մ.-ի մեր մասնաճիւղը: Ամսական մեր ժողովները կը կատարենք նոր կեդրոնին մէջ:

Ի՞նչ պետք է հասկնալ Հունգարիոյ Հայկական Ինքնավարութիւնը ըսելով:

- 1994ին, Հունգարիոյ պետութիւնը երկրին 13 փոքրամասնութիւններուն, անոնց կարգին նաեւ հայերուն, իրաւունքը տուաւ առանձին ինքնավարութիւններ ստեղծելու եւ իր՝ պետութեան




նիւթական աջակցութեամբ գործելու: Բացատրեմ ինչպէս. Հունգարիոյ խորհրդարանական ընտրութիւններու օրերուն, միաժամանակ տեղի կ'ունենան նաեւ ազգային փոքրամասնութիւններու երեսփոխանական ընտրութիւններ: Իւրաքանչիւր փոքրամասնութիւն կ'ընտրէ իր խորհրդարանը, այս պարագային՝ ինքնավարութիւնը: Հայութիւնը բաժնուած է 35 թաղամասերու մէջ: Իւրաքանչիւր թաղամասէ կ'ընտրուի 5 հայ երեսփոխան: Կը յառաջանայ 175 հոգիինոց երեսփոխանական կազմ, որմէ կը կազմուի դեկավար մարմին՝ 25 հոգիինոց:

Իսկ ի՞նչ իրաւասութիւններ կը վայելէ այս խորհրդարանը, ձեր բառերով՝ ինքնավարութիւնը:

- Ինքնավարութեան իրաւասութիւնները շատ են: Ան կը ներկայացնէ հայութիւնը՝ յաջս պետութեան: Ունի նախագահ, փոխ նախագահ, կոմիտէներ, պետութեան կողմէ տրամադրուած կեդրոն (Պուտափէշթ, Պալաթինոս փողոց 2) եւ «Արմենիա» անունով թերթ: Ինքնավարութիւնը կը զբաղի հայր հայ՝ պահելու աշխատանքով: Մենք պարտաւոր ենք հայ մշակոյթը, լեզուն պահպանել եւ հայութիւնը յուզող հարցերով զբաղիլ:

Եկեղեցւոյ հարցերով ալ չի զբաղի՞ր ան:

- Եկեղեցին առանձին հարց է: Դժբախտաբար, եկեղեցական հարցերը այսօր շատ են Հունգարիոյ մէջ: Հունգարիոյ հայութիւնը հինէն ի վեր կապուած է Մխիթարեաններու: Հիմա հունգար եկեղեցւոյ կաթողիկէ կարտինալը Մխիթարեան եկեղեցին առած է միաբանութեան ձեռքէն եւ մենք զրկուած ենք եկեղեցի ունենալու կարելիութենէն: Մեր մեծագոյն աշխատանքն է եկեղեցին իր տիրոջ՝ հայութեան վերադարձնելը: Հունգարիոյ բոլոր հայերը առաքելական են եւ կը հետեւին Մխիթարեան միաբանութեան, որովհետեւ օրէն Մխիթարեանները ներկայութիւն եղած եւ գործած են Հունգարիոյ մէջ:



Հունգարիոյ Հայկական Ինքնավարութեան պաշտօնաթերթ «Արմենիա»-ի Դեկտ. 2007ի թիւը:

Որքանով կը գնահատուի այսօր հունգարահայ գաղութը եւ հայ մնալու ի՞նչ կարելիութիւններ ունի ան:


- Հունգարիոյ հայութիւնը այսօր կը հաշուէ 10-12 հազար, ցրուած՝ տարբեր շրջաններու մէջ: Մեծամասնութիւնը Հունգարիա ծնած-մեծցածներ են, որոնք հայերէն լաւ խօսիլ չեն գիտեր: Կան նաեւ հայերէն լաւ խօսիլ գիտցողներ, որոնք Հայաստանէն, Իրանէն, Լիբանանէն, Սուրիայէն կամ Կիպրոսէն են: Օրինակ՝ ես ծնած եմ Հայաստան եւ 18 տարիէ կ'ապրիմ Հունգարիա:

Հունգարիոյ մէջ հայ մնալու գլխաւոր միջոցը հայկական դպրոց ունենալն է: Մենք ունինք կիրակնօրեայ դպրոց մը, ուր կը սորվեցնենք հայերէն եւ հայոց պատմութիւն: Դպրոցը կը գործէր Հայկական Ինքնավարութեան Կեդրոնին մէջ, իսկ հիմա արդէն փոխադրուած է Հայկական Մշակութային Կեդրոն:

Մենք ունինք «Արմենիա» երկլեզու թերթը, որ տարին լոյս կը տեսէ եօթը թիւ՝ հայերէն եւ հունգարերէն: Թերթին պատասխանատու խմբագիրը ես եմ, գլխաւոր խմբագիրը Գագիկ Զոթեանն է: Երկուքս ալ Հ.Մ.Ը.Մ.ական: Գաղութին մէջ կը գործեն շուրջ 20 հայկական կազմակերպութիւններ, ինչպէս՝ «Հայ ժողովուրդ», «Սփիւռք», «Կիլիկիա», «Արարատ», «Հայ մշակոյթի հիմնադրամ» եւ այլն: Բոլորին ալ նպատակը նոյնն է՝ պահպանել Հունգարիոյ հայ սփիւռքը:

Ի՞նչ կարելի է ըսել հայութեան հանդէպ հունգար ժողովուրդին եւ պետութեան կեցուածքին մասին:

- Հունգարիոյ պատմութեան մէջ հայ ժողովուրդը կատարած է դրական մեծ դեր: Հունգար ժողովուրդը քաջածանօթ է հայոց պատմութեան: Տարիներ շարունակ Հունգարիոյ կառավարութիւններուն մէջ եղած են հայեր: Հունգար ազատագրական շարժումին մէջ եւս եղած են հայեր: Պետութեան վերաբերումը 1994էն ասդին քաջալերական է: Կացութիւնը չի նմանիր Պուլկարիոյ, Ռումանիոյ կամ որեւէ այլ երկրի: Հունգար ժողովուրդը յատուկ հոգածութիւն կը ցուցաբերէ իր փոքրամասնութիւններուն: Պետութիւնը տարեկան 150 հազար տոլար կը յատկացնէ Հունգարիոյ Հայկական Ինքնավարութեան, իսկ 40 հազար տոլար՝ Հայկական Մշակութային Կեդրոնին: Մենք նիւթականի հարց չունինք, հայ մնալու հարց ունինք: Ճիշդ է, մենք Ցեղասպանութիւն չենք տեսած, սակայն հայ ըլլալով կը կրենք մեր նախնիներուն բոլոր ցաւերը: Հայկականութիւնը մեր արեան մէջ է եւ Հ.Մ.Ը.Մ.ը լաւագոյն միջոցն է այդ հայկականութիւնը ապրելու եւ անով նոր սերունդները ապրեցնելու:



«ՄԱՐԶԻԿ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ Բ. ՀԱՏՈՐԸ

Յակոբ Մանուկեան ՊԷՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը 1990ին առանձին հատորով մը լոյս ընծայեց «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրականները: Սոյն հրատարակութիւնը օրին արժանացաւ իր ընթերցողներուն ջերմ գնահատանքին:

Արդարեւ, Ա. հատորի յաջողութենէն քաջալերուած, անոր հրատարակութենէն ուղիղ 17 տարի ետք, 2007ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը Բ. հատորով լոյս ընծայեց 1990էն ի վեր գրուած «Մարզիկ»ի «գաղափարական ուղի ճշդող խմբագրականները»:

Ըստ հրատարակիչներուն, «Մարզիկ»ի Բ. հատորը բովանդակող խմբագրականները ունին բարոյական նկարագիր: Անոնք չեն պատկանիր որոշ ժամանակաշրջանի մը միայն, այլ կ'ընթանան դէպի ապագան՝ քայլ պահելով ժամանակի հոլովոյթին հետ: Անոնք կը վերաբերին հայակերտումի, հայապահպանումի, համաշխարհայնացումի, այլասերումի, նիւթապաշտութեան եւ կենսական այլ հարցերու ու երեւոյթներու:

Ըստ հրատարակիչներուն, «Մարզիկ»ի Բ. հատորին հրատարակութեամբ ընթերցողները պատեհութիւնը կ'ունենան վերստին կարդալու թերթին այն բազմաթիւ խմբագրականները, զորս անոնք կարդացած եւ մոռցած կրնան ըլլալ վերջին 17 տարիներու ընթացքին:

Հատորին խմբագիրը՝ Վիգէն Աւագեան «Մատենագիտական ծանօթութիւն» բաժինով կը փոխանցէ անհրաժեշտ տեղեկութիւններ Բ. հատորին մասին, իբրեւ անմիջական շարունակութիւնը Ա. հատորին:

Ան կ'ըսէ, թէ Բ. հատորին առաջին 4 խմբագրականները գրուած են Երուանդ Տէմիրճեանի կողմէ: Յաջորդող 15 խմբագրականները կը պատկանին բանաստեղծ Յ. Գեղարդին (տոքթ. Յարութիւն Գազանճեանի) գրիչին: Իսկ մնացեալ 105 խմբագրականները գրուած են Վիգէն Աւագեանի կողմէ:

Սոյն հատորը հրատարակուած է 2007ին, Պէյրութ, խմբագրութեամբ՝ Վիգէն Աւագեանի եւ մեկենասութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ՝ Ճորճ Տաքէսեանի (Ամման), Սարգիս Տէր Պետրոսեանի (Սիւնի) եւ Յովհաննէս Մարտոյեանի (Սիւնի):

«Մարզիկ Պաշտօնաթերթի խմբագրականներ» խորագրով Բ. հատորը կը սկսի Երուանդ Տէմիրճեանի ստորագրած 4 խմբագրականներով:

Առաջին հերթին ան կու տայ իմաստը երգում բառին, որ, ըստ իրեն, կը նշանակէ տէր կանգնիլ մեր ազգային աւանդութիւններուն, հայ լեզուին, մշակոյթին եւ հայրենիքին: Կ'ըսէ, թէ 1915ի անբախտ սերունդը երգում ըրաւ իր պապերուն անունով, որ ուշ կամ վաղ պիտի ազատագրէ հայկական բռնադրաւեալ հողերը, թէ՛ սերունդներ երգում ըրին, որ պիտի պայքարին հայրենիքի անկախութեան համար, թէ՛ երգումը նուիրական է Աստուծոյ նման եւ հայրենիքի նման անփոխարինելի:

«Մնայուն օրակարգ» իր խմբագրականով Երուանդ Տէմիրճեան կ'ըսէ, թէ սրբութիւն է հայրենիքը, որ կը կազմէ այն առանցքը, որուն շուրջ կը դառնան մեր ազգային հաստատութիւնները, կազմակերպութիւնները, միութիւններն ու հիմնարկները: Թէ՛ ամէն բան պէտք է ծառայէ հայրենիքին: Մեր գոյութիւնը շնչաւորող միակ իմացումն է հայրենիքը, որուն ցորեանի դաշտերուն բոյրով կը սնանինք: Մեր թթուածինն է ան, որ կը կենսաւորէ մեզ, խանդ ու եռանդ կը ներշնչէ մեզի: Հայրենիքը պէտք է ըլլայ մեր մտասեւեռումին առարկան եւ դառնայ մնայուն օրակարգը մեր աւօրեայ


կեանքին եւ ապրումնե-
րուն:

Երուանդ Տէմիրճեան
կը կատարէ գովքը արե-
նոյշներու եւ արիներու,
որոնք իբրեւ երգի սիրա-
հարներ՝ իրենց քաղցրա-
նոյշ դայլայլով կը փարա-
տեն կեանքի դառնութիւնը
ու մերթ ուզումառնէ եր-
գերով կ'ընթանան յառաջ,
բարձր պահելով իրենց ճա-
կատները՝ ճակատագրի
հողմերուն դիմաց:

Երուանդ Տէմիրճեան
իր չորրորդ եւ վերջին
խմբագրականով կը նկա-
րագրէ Հ.Մ.Ը.Մ-ի Պատ-
գամաւորական ժողովնե-
րը, որոնց կը մասնակցին Սփիւռքի տարբեր երկիրներէն ժա-
մանած պատգամաւորներ, չորս տարին անգամ մը, ազգին եւ
հայրենիքին ծառայելու առաջադրութեամբ:

Հատորին յաջորդ 15 խմբագրականներուն հեղինակն է
բանաստեղծ Յ. Գեղարդ, որ «Ողջո՛յն, Հայաստան» խորագի-
րով իր խմբագրականին մէջ կ'ըսէ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը իր սկառու-
ներուն գօտիին եւ գդակին նշանակին վրայ փորագրեց Արա-
րատն ու Արաքսը, որպէսզի հետեւելով կամընդնկէց գետի
օրինակին՝ քանդեն Հայաստանի վրայ ծանրացող բռնութեան
շղթաները եւ ժողովրդային համատարած ոգեւորութեամբ՝
պարզեն յաղթանակի դրօշը Արարատի կատարին:

Ըստ Յ. Գեղարդին, սկառուութիւնը մաքրակենցաղ է, որ
երբեք հետամուտ չէ հոգին արատաւորող եւ նսեմացնող զքօ-
սավայրերու հաճոյքներուն: Կը սիրէ վայելել բնութիւնը
մշտադալար անտառներու գրկին մէջ, ճիւնազարդ լեռներու



բարձունքներուն կամ արեգակի ճառագայթներով ողողուած
ծովափունքներուն:

Սկառուութիւնը գիտէ բնութեան Տաճարին մէջ կերտել
մաքուր մարմին եւ առաքինի նկարագիր:

Նուիրապետութիւնը կը հանդիսանայ հիմքը Հ.Մ.Ը.Մ-ի,
կ'ըսէ Յ. Գեղարդ: Չի բաւեր ըլլալ օժտուած ֆիզիքական բա-
ցառիկ կարողութեամբ՝ հասնելու համար նուիրապետու-
թեան վերջին աստիճանին, այլ անհրաժեշտ է ըլլալ ծառայա-
սէր, նուիրեալ եւ ժրաջան: Միայն զոհաբերութեամբ է, որ
գայլիկը կը հասնի մարզական բարձր դիրքերու:

Յ. Գեղարդ խանդավառ է պատմական այն շքեղ իրադար-
ձութեամբ, որ Հայաստանի վերանկախացումէն ետք Եռա-
գոյն դրօշը կը ծածանի Միացեալ Ազգերու Կազմակերպու-
թեան սեմին, գրաւելով արժանավայել իր տեղը՝ բազմաթիւ
այլ պետութիւններու դրօշներու շարքին:

Յ. Գեղարդ խորապէս կը ցանկայ, որ Ողիմպիականի ոս-
կերոց ջահը երկրէ երկիր իր ուղեւորութեան ընթացքին հաս-
նի նաեւ Արցախն ու Հայաստանն եւ ճառագայթէ հայրենի
լեռնաշխարհի բարձունքներէն:

Ըստ իրեն, թախիծն ու ժպիտը զոյգ դիմակներն են
կեանքի, որոնք զիրար կ'ամբողջացնեն մէկգմէկու լրացու-
ցիչ յատկութեամբ: Ան կը թելադրէ չմնալ սուգի եւ
տրտմութեան միջնորոտին մէջ, այլ բարեխառնել մեր նե-
րաշխարհը՝ զուարթառատ զգացումներով, հետեւելով ար-
ուեստագէտ Չարլի Չափլինի այն իմաստուն խօսքին, որ
կ'ըսէ. «Առանց ժպիտի ու խնդուքի օրը կորուստ է ու
մնաս»: Հետեւաբար խորհուրդ կու տայ պատանի ու երի-
տասարդ սկառուներուն կամ մարզիկներուն, որ կարե-
կից ըլլալով հանդերձ թշուառներու տառապանքին,
չմոռնան ապրիլ եւ գործել ուրախ եւ կայտառ տրամադ-
րութեամբ...

«Հրեղէն նետը» խորագիրը կրող խմբագրականով Յ.
Գեղարդ կ'ըսէ, թէ Պարսերոնայի Ողիմպիականին մաս-
նակցած հայրենի երեք մարզիկներ՝ Պետիկեանը, Մելի-



տոսեանը եւ Իսկէնտէրեանը մարզական իրենց համապատասխան շնորհներով ձեռք ձգեցին բացառիկ արդիւնքներ եւ արժանացան մէկական ոսկի մետալներու: Ուշագրաւ այն է, որ յիշեալ հայ մարզիկները ողիմպիականի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով պարգեցին մարզադաշտին վրայ Հայաստանի Հանրապետութեան եռախորհուրդ գրօշը...

Հատորին մնացեալ 105 խմբագրականները ստորագրած է հատորի խմբագիր Վիգէն Աւագեան, որ երկար ժամանակ վարած է խմբագրութիւնը «Ազդակ» օրաթերթին:

«Գործի եւ ուժականութեան մեր փառատօնները» խմբագրականին մէջ Վիգէն Աւագեան կ'ըսէ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը փառատօններ կազմակերպող միութիւն մը չէ, այլ տարուան մը ընթացքին իր կատարած աշխատանքները հայ ժողովուրդին դատաստանին կը ներկայացնէ շքեղ տողանցքներով: Մարզադաշտի թրիպիւններուն վրայ տեղ գրաւած հանդիսականները, դիտելով Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկներու տարեկան փառաւոր տողանցքը, կը վերահաստատեն իրենց վստահութիւնը մարմնակրթական յիշեալ միութեան հանդէպ ու կը քաջալերեն իրենց զաւակները, որ անգամակցին անոր:

Ըստ Վիգէն Աւագեանի, Հ.Մ.Ը.Մ-ը, իբրեւ մարմնակրթական միութիւն, հիմնուած է ինքնաբերու կարգապահութեան վրայ, թէ՛ կարգապահ կրնան ըլլալ միայն անոնք, որոնք վեհանքն են, ունին ազնիւ նկարագիր եւ մշակուած միտք:

«Հաւատք մեր գործին եւ յաջողութեան» խորագիրով

խմբագրականին մէջ Վիգէն Աւագեան կը դրուատէ այն մտածումը, թէ հաւատքը ունի հրաշագործ զօրութիւն, որ կը կազմէ հիմնական պայմանը որեւէ գործի յաջողութեան: Ան կ'ըսէ, թէ հաւատքով է, որ անկարելի նախաձեռնութիւններն անգամ կը վերածուին գեղեցիկ իրագործումներու, թէ այս առումով բազմաթիւ հիւանդներ բժշկուած են շնորհիւ իրենց հաւատքին: Յիսուս այս կապակցութեամբ իր խօսքը ուղղելով հիւանդի մը՝ կ'ըսէ. «Հաւատք քո փրկեցնէ գրեզ»:

Կասկածն է հաւատքի միակ թշնամին, կ'ըսէ Վիգէն Աւագեան: Իր գործին հանդէպ թերահաւատութեամբ տրամադրուած անհատը չի կրնար զայն յաջողութեամբ աւարտել: Ուստի, ան կը թելադրէ, որ երիտասարդներ հաւատքով լծուին աշխատանքի եւ խանդավառութեամբ դիմակալեն ամէն դժուարութիւն:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ-ի «Մարզիկ Պաշտօնաթերթի խմբագրականներ» խորագիրով Բ. հատորը զնահատելի հրատարակութիւն մըն է, որ կը յատկանշուի սկառուտական կեանքի մասին իր ճիշտ բովանդակութեամբ: Պէտք է ըսել, որ սոյն հատորին ընդգրկած նիւթերը կը պահեն իրենց այժմէականութիւնը՝ առնչուած ըլլալով հայ ժողովուրդի հոգեմտաւոր արժեքներուն եւ զաղափարական ըմբռնումներուն: Այս առումով, բարոյական սկզբունքներու ուղեցոյց մըն է սոյն հատորը, որ կը տողորէ ընթերցողին հոգին՝ ազգային եւ հայրենասիրական սրտառուչ պատգամներով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar




Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europehotel.am

«ՀԱՅՐ ՄԵՐ»Ը ԴՈՒՆ ԳԻՏԵՄ, ՕՂՂՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ

**Ձարեհ Սափարգեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ**

Սուրբիոյ բանակի Փռութպոլի խումբը, որ լաւագոյնը կը նըկատուէր Սուրբիոյ մէջ, Արեւելեան Եւրոպայի շրջապատը ուղեց տեղացի լաւագոյն մէկ կամ երկու խաղացողներով զօրացած խումբով ներկայանալ: Եւ լաւագոյն թեկնածուն անշուշտ Անդրանիկն էր, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի, նաեւ Սուրբիոյ լաւագոյն ումբարկուն: Անդրանիկ այդ տարիներուն լաւագոյնը կը նկատուէր: Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն յոյսը, իսկ հակառակորդ խումբի բերդապահներուն ահն ու սարսափը: Երբ գնդակը Անդրանիկին ոտքը ըլլար, եւ ան հակառակորդին բերդին մօտենար, համակիրները, մեծ եւ պզտիկ հաւասարապէս, տարօրինակ խանդավառութեամբ կը քաջալերէին զինք՝ խոստանալով համբուրել անոր ոտքէն մինչեւ ճակատը, չմոռնալով նաեւ գողտրիկ տեղերը: Իսկ ծայրայեղներ, Անդրանիկին նշանակած կոլերուն մէջ նոյնիսկ վրէժի գզացում մը տեսներով՝ յաճախ կը պոռային. «Կոլ մը, Անդո՛, կոլ մը. յիշէ մէկ միլիոնը եւ անոնց սիրոյն կոլ մը»: Եւ Անդրանիկ երբեք յուսախաբ չէր ընէր զանոնք: Եւ մրցումներէն ետք յաճախ զինք ուսամբարձ դէպի ինքնաշարժ կը տանէին:



Սուրբիական բանակի խումբը 1966ի ամրան վերջաւորութեան արդիական փոխադրակառքով մը ճամբայ ելաւ դէպի Թուրքիա եւ Արեւելեան Եւրոպա: Առաջին հանգրուանը Անգարան էր: Խումբը, Անդրանիկի կողքին, զօրացած էր նաեւ Ուաշլով, որ կը նկատուէր Սուրբիոյ լաւագոյն յետսապահներէն եւ մաս կը կազմէր Հ.Մ.Ը.Մ.ի թիւ մէկ հակառակորդ մրցակից «Ահլի» խումբին: Թէեւ Անդրանիկ եւ Ուաշլ հակառակորդ խումբերու կը պատկանէին, բայց լաւ գնահատելով իրարու բարձր խաղարկութիւնը, դաշտէն դուրս բարեկամ-

ներ էին: Խումբին մնայուն կերպով մաս կը կազմէին նաեւ Աւետիս եւ Յակոբիկ, որոնք Հայէպի մարաշցիներու «Վասպուրական» խումբին աստղերը ըլլալէ ետք, մնայուն կերպով անդամագրուած էին բանակի խումբին՝ դառնալով ամբողջ Սուրբիոյ Փռութպոլի համակիրներուն համար մէկական կուռքեր:

Անգարայի մէջ իրենց առաջին մրցումը տեղւոյն հաւաքականին դէմ էր: Հանդերձարանին մէջ, Անդրանիկ, Աւետիս եւ Յակոբիկ իրարու քով դալով՝ խոստացան իրենց ամբողջ կարելին ընել, Սուրբիոյ եւ մանաւանդ հայութեան արժանապատուութիւնը բարձր պահելու համար: Ուաշլ քիչ հեռուէն թեթեւ ժպիտով մը կը հետեւէր այս երեքին հաւաքին: Գիտէր, թէ ինչի՞ մասին էր եւ լաւատեղեակ՝ անոնց ապրումներուն եւ յուզումներուն, որովհետեւ հայերուն բաւական մօտ էր: Վերջաւորութեան, ինք ալ միանալով եւ երեքին ուսերուն փաղաքշական զարնելով, ինք ալ խոստացաւ իր կարելին ընել: Մրցումը սկսելէն հազիւ երեք վայրկեան անց, Աւետիսին սխալ մէկ շարժումը օգտագործելով, թուրք յառաջապահը նշանակեց

խաղին առաջին կողմը: Բարձրախօսը մեծ խանդավառութեամբ յայտարարեց կողը նշանակողին անունը, իսկ թուրք համակիրներուն ցնծութեան եւ քաջալերութեան բացազանչութիւնները մինչեւ երկինք հասան: Թուրք համակիրներուն երեսին կար նաեւ քմծիծաղի արտայայտութիւն մը, թէ սուր-իական այս խումբը իսկապէս ապիկար է, եւ խաղը պիտի վերջանայ անոնց ամօթալի ու խայտառակ պարտութեամբ:

Սուրիական խումբի խաղացողներն ու պատասխանատուները չչմած էին: Շչմած էին մանաւանդ երեք հայերը, իսկ Աւետիս՝ ամէնէն աւելին: Խումբին խմբապետի իր դիրքին եւ փորձառութեան երբեք չէր ներեր իր սխալը: Անդրանիկ հեռւէն ձեռքով նշան ըրաւ Աւետիսին, թէ հոգ չընէ, Յակոբիկ քաջալերական քանի մը խօսք ըսաւ, իսկ Ուաէլ, որ Աւետիսին հետ յետսապահ դիրքը կը պաշտպանէր, մօտեցաւ անոր ու ըսաւ. «Աւետիս, երբեք մի՛ մտահոգուիր, դու եւ ես մէկական բերդ պիտի ըլլանք եւ այլեւս ոչ մէկ գնդակ պիտի անցնի մեզմէ»: Իսկապէս ալ այս չորսը մէկական գերազանց խաղարկութիւն ցոյց տուին, իսկ Աւետիս ու Ուաէլ գերմարդկային ճիգերով կասեցուցին թրքական ամէն գրոհ: Խաղին քառասուններորդ վայրկեանին, թրքական ամբոխը անհամբեր, որ երկրորդ կողը ուշացաւ, խելայեղ կը պոռար. «Կո՛ւ, կո՛ւ, Թուրքիո՛յ կո՛ւ», երբ Յակոբիկ լաւ փոխանցումով մը գնդակը հասցուց Անդրանիկին, որ իրեն յատուկ հնարամտութեամբ հակառակորդին երկու յետսապահները խաղի բերելով՝ առանձին մնաց բերդապահին հետ: Այդ պահուն Եղեռնին սպաննուած իր մեծ հօր եւ 1915ի ամբողջ ողբերգութեան պատկերը իր ուղեղն ու հոգիները կլանած էին, ոտքի փոքր շարժումով մը, մինչ թուրք բերդապահը նետուեցաւ մէկ կողմ, գնդակը այդ պահուն նիզակի մը երեւոյթը առաւ իր ենթագիտակիցին մէջ եւ ինք «ՀԱՅԿ» դարձած ուղեց գայն խրել «Բէլ»ի սրտին ու գօրաւոր հարուածով մը գնդակը գետեղեց բերդին միւս անկիւնը: Այս անգամ չչմելու կարգը թուրք համակիրներուն եւ խաղացողներուն էր: Բարձրախօսը ոչ խանդավառ յայտարարեց Անդրանիկին անունը եւ բացի սուրիական խումբի խաղացողներուն եւ պատասխանատուներուն ուրախութեան ճիչերէն, ամբողջ դաշտը քար լուծութիւն կը տիրէր: Տասնեակ հազարաւոր իրենց տեղերը նստած էին: Իսկ կիսախաղին մէկ վայրկեան մնացած, Յակոբիկ կրկին գնդակը փոխանցեց Անդրանիկին, որ ալ ոտքով արագ կասեցնելէ ետք, քսան մեթրէն ուժգին հարուածով տեղաւորեց գայն թրքական բերդին ալ անկիւնը: Բարձրախօսին խօսնակը այս անգամ խեղդուկ եւ յուզուած ձայնով յայտարարեց Անդրանիկին անունը: Իսկ հանդիսատեսները առաջին ցնցումէն տակաւին չսթափած՝ իրենց աչքերուն չէին հաւատար ու չչմածէ աւելի, մէկական «գամալի» դարձած էին:

Կիսախաղի դադարին սուրիական խումբին երջանկութեան սահման չկար:

Երկրորդ կիսախաղին թուրք համակիրները կրկին խանդավառ էին եւ վստահ, թէ իրենց խումբը անպայման պիտի յաղթէ կամ գոնէ հաւասարի. ահագին գոռում-գոչումներով սկսան քաջալերել իրենց խումբը, մանաւանդ՝ յառաջապահները, կրկին պոռալով. «Կո՛ւ, կո՛ւ, Թուրքիո՛յ կո՛ւ»: Բայց անոնց բոլոր յարձակումները կը կասեցուէին անխորտակելի

պատնէշներ դարձած Աւետիսին եւ Ուաէլին կողմէ: Խաղին եօթանասունվեցերորդ վայրկեանին, Անդրանիկ օգտուելով թուրք յետսապահին անուշադրութենէն, գնդակը խլեց անոր ոտքէն եւ ինքզինք դէմ դիմաց գտաւ բերդապահին հետ, որ արագ ոստումով նետուեցաւ ոտքերուն, խլելու համար գնդակը: Անդրանիկ իւրայատուկ ճարպիկութեամբ կրցաւ գնդակին հետ ճողոպրիլ բերդապահին ոստումէն ու հիմա մէկ մեթր միայն հեռու էր բերդէն եւ առանձին: Պէտք չզգաց գօրաւոր հարուածելու: Վստահ, թէ «Բէլ»ը արդէն խորտակւած է, գնդակը դանդաղ եւ հեզանքով գլտորեց թրքական դարպասէն ներս: Բարձրախօսը այս անգամ խուպոտ եւ գրեթէ լալկան ձայնով յայտարարեց Անդրանիկին անունը:

Այդ օր սուրիական խումբը, շնորհիւ հայ մարզիկներուն եւ Ուաէլին, մանաւանդ Անդրանիկին, 3-1 հպարտալի յաղթանակ մը արձանագրեց:

Երբ մարզիկները հանդերձարանէն դէպի իրենց փոխադրակառքը կ'ուղղուէին, յիսուննոց թուրք մը, քովէն երեսուննոց, իսկ մէկ քայլ ետեւէն քսաննոց երկու թիկնեղներ, մօտեցան Անդրանիկին: Երեսուննոցը անմիջապէս արաբերէնով ըսաւ, թէ ինք քանի մը գիւղերու տէր Ռեզա պէյին թարգմանն է: Իսկապէս ալ յիսուննոց թուրքը գիւղապետի երեւոյթ ունէր: Շատ մաքուր եւ սուղնոց կերպասէ հագուստներուն կողքին, ունէր պատկառելի երեւոյթ եւ հեղինակութիւն: Ինքնավստահ ձայնով թարգմանիչին միջոցով հարցուց. «Անդրանիկը դո՞ւն ես»: Յետոյ շնորհաւորելէ ետք զինք իր բացառիկ խաղարկութեան համար, նոյն ոճով շարունակեց. «Հայ ես»: «Այո՛, հայ եմ», եղաւ Անդրանիկին հպարտ եւ նոյնքան բարձրաձայն պատասխանը: Փոքր ժպիտ մը ուրուագրուեցաւ գիւղապետին դէմքին եւ լաւ մը գննելէ ետք Անդրանիկը, աւելի մօտենալով եւ ձայնին երանգը մեղմացնելով՝ խնդրեց. «Կարելի՞ է այս իրիկուն հանդիպիլ ձեր պանդոկը, շատ կարեւոր է»: Երբ Անդրանիկ հարցուց, թէ ի՞նչ կարեւոր բանի համար է խօսքը եւ ինչո՞ւ հիմա չի կրնար խօսիլ: Ռեզա պէյ հիմա գրեթէ աղաչական, ըսաւ. «Կը խնդրեմ, մի՛ մերժեք զիս, ես երբեք մէկու մը չեմ աղաչած, բայց մօրս համար է, կ'աղաչեմ եւ միայն քսան վայրկեան»:

Թէեւ Անդրանիկ շատ համոզուած չէր, սակայն համաձայնեցաւ երեկոյեան հանդիպիլ թուրքին, մանաւանդ որ մարդը իր մայրը յիշած էր, ու ինք յարգանք եւ տկարութիւն ունէր մայրերու հանդէպ:

Ուաէլ, որ այս ընթացքին Անդրանիկին կողքին էր, երբ միասին փոխադրակառք կը բարձրանային, իր զարմանքը յայտնեց, թէ Անդրանիկ ինչո՞ւ համաձայնած էր թուրքին հանդիպիլ: Եւ երբ իրենց աթոռին տեղաւորուեցան, հեզանական երգիծանքով մը շարունակեց. «Գիւղապետ թուրքը կը նշանակող գեղեցիկ սրունքներուդ զարնուած է կարծեմ, իրիկունը քսան վայրկեան քեզի հետ առանձնանալէ ետք, եթէ իսկապէս հաւանքեց, հաւանաբար ալ հետը գիւղ տանի եւ լաւ տուն մը կահաւորէ քեզի»: Ուաէլ տակաւին պիտի շարունակէր իր խեղկատակ խօսակցութիւնը, եթէ Անդրանիկ արմուկի հարուածով մը զինք չընեցնէր:

Գիչերուան տասի մօտ էր, Ուաէլ եւ Անդրանիկ, որոնք սենեկակիցներ էին, իրենց անկողիններուն վրայ երկնցած,

հանգստանալով կը խօսակցեին, երբ պանդոկին գրասենեակէն հեռաձայնեցին, թէ Ռեզա անունով մէկը իրենց արտօնութիւնը կ'ուզէ սենեակ գալու: Ուսէլ նորէն ձեռք առաւ Անդրանիկը՝ ըսելով. «Շո՛ւտ, մագերդ լաւ մը սանտրէ եւ չպարէէ, որպէսզի մարդդ քեզ լաւ տեսնէ...»: Քիչ ետք, երբ դուռը գարնուեցաւ, նոյն չորսն էին, առաւել՝ եօթանասունի սեմին մայրիկ մը: Երկու թիկնեղները դուրսը սպասեցին եւ Ռեզա պէյ մայրը գուրգուրոտ կերպով նստեցնելէ ետք, ներդուրթիւն ինդրեց այս ուշ ժամուն գիրենք նեղացնելուն համար ու թարգմանիչին միջոցով խօսքը մօրը տուաւ.

- Անդրանիկ, տղաս, երբ Ռեզա որդիս կ'իմանայ հայ ըլլալդ, կ'ուզէ զիս քովդ բերել, որպէսզի վերջին բաղձանքներէս մէկը կատարուի: Ես ալ հայ եմ, տարագրութեան ժամանակ, ընտանիքիս բոլոր անդամները կորսնցնելէ ետք, Ռեզային հայրը՝ Մեհմէտ պէյ (Ալլահը թող զինք լոյսի մէջ պահէ) զիս կնութեան առաւ եւ լաւ կեանք մը տուաւ: Զաւակներ եւ թոռներ եւ ծոռներ ունիմ: Իմ հայկական անունս Յասմիկ է, յետոյ դարձած եմ Զէյնէպ: Զէյնէպ հանրմ: Հայերէնը լաւ գիտէի, բայց հիմա ոչ իսկ մէկ բառ կը յիշեմ: Հաւատացեալ ընտանիք մըն էինք, միշտ եկեղեցի գացող ու աղօթող: Աղօթք մը կար, որ ամէն օր կ'աղօթէի, բայց յիսուն տարի չաղօթելուս համար բոլորովին մոռցած եմ:

(Շար. 1)

ՄԵՆՔ ՈՒԽՏԵԱԼՆԵՐ ԵՆՔ

Մենք ուխտեալներ ենք Բ.Ս.Ը.Ս.ի, Արի-արենոյշ, գայլիկ-արծուիկ, Զայու պարծանքով կանգնած կողք-կողքի, Կազմած ենք հզօր մէկ մեծ ընտանիք:

Բ.Ս.Ը.Ս.ի դրօշն բռնած վեր՝ Կը բարձրանանք եւ կը բարձրացնենք, Մեր շարքերով խիտ, կուռ եւ անվեհեր, Զպարտ մեր ազգին պատիւ կը բերենք:

Կեցցե՛ մարզական Բ.Ս.Ը.Ս.ը, Կեցցեն՛ իտեալի սուրբեալները, Գրիգոր Յակոբեան, Շաւարշ Զրիսեան, Բ.Ս.Ը.Ս.ի հիմնադիրները:

Մենք ուխտեալներ ենք Բ.Ս.Ը.Ս.ի, Մարմնակրթանքի սկաուտ-մարզիկ, Եկեք հայորդիք, միացեք մեզի, Ըլլանք յաղթական ազգին զօրավիգ:

ՇԱՅՊԱՆ

'Made from one single slice of natural Australian opal'



Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



ՀԱՅ ԴՐՕՇԸ

ԿԱՐՄԻՐ, ԿԱՊՈՅՏ,

Դրօշ բառացիորեն կը նշանակէ քանդակուած պատկեր կամ արձան, յատկապէս աստուածներու նուիրուած: Այս բառը առնուած է պահլաերէնէ (հին պարսկերէն):

Հետագային դրօշ բառը իր այժմու իմաստով սկսած է գործածուիլ: Ըստ Մալխասեանի, դրօշակ կը նշանակէ ձողի մը ծայրին կցուած լաթ մը, որ կը կրէ որեւէ ազգի ազգային գոյները կամ նշանները:

Անցեալին թէ ներկայիս ազգի մը դրօշակը իր վեհագոյն արժէքն է:

Հին օրերուն, երկու կողմերու պատերազմները կը դադրէին, երբ մէկ կողմը գրաւէր միւս կողմին դրօշակն ու կուռքերը:

Դարերու փոփոխութեամբ, դրօշի հանդէպ ժողովուրդի մը ունեցած մեծ սէրն ու յարգանքը չէ փոխուած:

Ինչպէս բոլոր ազգերը, հայն ալ ունեցած է իր ազգային դրօշակը: Հայկական դրօշակը ուսումնասիրուած է մասնաւորաբար Միխիթարեան հայրերու կողմէ:

Հայր Ղեւոնդ Ալիշան, մէկ դարէ աւելի առաջ, հայ ազգային դրօշը ներկայացուցած է այսպէս՝

Ո՛վ եռափայլ եռախորհուրդ,
Կարմիր, կանաչ, կապոյտ հայոց...

Ուրիշ տեղ մը՝
Կարմիր, կանաչ եւ կապոյտ
Սաւառնեալ գրոհից դրօշք...

Ուրեմն, ըստ Ալիշանի հայ դրօշը ունի կարմիր, կանաչ եւ կապոյտ գոյներ:

Ըստ Հայր Վարդան Հացունիի, Ալիշան այս գոյները քաղած է հետեւեալ աղբիւրներէն.-

Ա. Եպիփանու Դաստառակի պատմութիւն, որուն մէջ կ'ըսուի թէ Աբգար

թագաւոր պատրաստել տուած է երեք հազար մոմեր սպիտակ, կարմիր, կանաչ գոյներով:

Բ. Թովմա Մեծոփեցիի պատմութիւն, ուր դարձեալ կը յիշուին սպիտակ, կարմիր, կանաչ գոյները:

Գ. 1508ի Մեղրեցիի պատրաստած բառարանին մէջ, նարօտին երեք գոյները եղած են կարմիր, կանաչ եւ սպիտակ:

Ղեւոնդ Ալիշան վերը յիշուած գոյներէն զեղչած է սպիտակը եւ աւելցուցած է կապոյտը:

Հայաստանի մէջ իւրաքանչիւր նախարարական տոհմ ունէր իր ուրոյն դրօշը, եւ երբ նախարարական տոհմ մը կ'անցնէր իշխանութեան գլուխ իր տոհմին դրօշը կը դառնար ամբողջ պետութեան դրօշը: Այսպէս, Արշակունիներն ու Բագրատունիները կը գործածէին ծիրանի գոյնի դրօշ մը, որուն վրայ կար արծիւ մը, որ բռնած էր թագաւորական խաչագլուխ գաւազան:



ՆԱՐՆՋԱԳՈՅՆ.

Այսպէս, հայ թագաւորական կամ իշխանական ընտանիքներու գործածած նշանը ընդհանրապէս արծիւը կամ առիւծն էր, մինչեւ Ռուբինեան թագաւորութեան անկումը:

Հայ թագաւորական կամ իշխանական դրօշներու գոյները ընդհանրապէս կարմիր եղած են, գործածուած են նաեւ կապոյտ, կանաչ եւ սպիտակ գոյները:

1918ին, երբ Հայաստանի Հանրապետութիւնը հռչակուեցաւ, առաջին առթիւ որոշուեցան հայկական դրօշին գոյները՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն, անշուշտ այս գոյներուն որդեգրումը կատարուած է յետ երկարատեւ վիճաբանութիւններու եւ խորհրդակցութիւններու: Դրօշի պատրաստութեան մէջ բաժին ունեցած են Գարեգին Ա. Յովսէփեանցի, Մանուկ Աբեղեանի եւ Ստեփաննոս Մալխասեանցի նման ականաւոր գիտնականներ: Առարկութիւններ եղած են միայն նարնջագոյնի դէմ, սակայն օրուան վարչապետ Քա-

ջազնուների պնդումով նարնջագոյնը մուտք գործած է մեր դրօշին մէջ:

Ք ա ջ ա զ ն ու ն ի ի պնդումին մէջ կայ գեղագիտական նկատում, առաւել, ըլլալով ճարտարապետ, ան լաւ ուսումնասիրած պէտք է ըլլայ հին յունական ճարտարապետութիւնը: Յոյներ իրենց տաճարներուն մէջ կը գործածէին այս երեք գոյները. տաճարին մէջ գտնուող սիւները կը ներկուէին կարմիր եւ նարնջագոյն, իսկ տախտակամածը՝ կապոյտ:

Հայկական Եռագոյնը իր կազմութեան առաջին օրերուն յատուկ կերպով չէ իմաստաւորուած. հետագային է, որ ան իմաստաւորուեցաւ, այսպէս.

Կարմիրը կը ներկայացնէ հայոց թափած արիւնը:

Կապոյտը կը ներկայացնէ հայոց պայծառ երկինքը:

Նարնջագոյնը կը ներկայացնէ հայու աշխատանքին խտացումը:

1920-21ին, երբ Հայաստան խորհրդրդայնացաւ, իբրեւ դրօշ որդեգրեց խորհրդային կարմիր դրօշը, որ խորհրդրդանիշն էր համայնավար յեղափոխութեան, անկիւնը մուրճն ու մանգաղը, իբրեւ խորհրդանիշ բանուորութեան եւ հողամշակութի:

Հետագային, ԽՍՀՄ-ի ժամանակահատուկ իւրաքանչիւր երկիր ունեցաւ իր առանձին դրօշակը: Այդպէս ալ Խորհրդ-



դային Հայաստանի դրօշը դարձաւ հորիզոնական երկու կարմիրներ, մէջտեղը ունենալով հորիզոնական կապոյտը, իսկ վերի անկիւնը, կարմիրին վրայ, գետեղուեցաւ նարնջագոյն մուրճ մանգաղն ու հնգգլխանի աստղը:

Այժմ, երբ Հայաստան դարձեալ ազատ եւ անկախ է, հայկական Եռագոյնը վերստին դարձած է հայոց ազգային դրօշակ:



ՀՆՕՐԵԱՅ ԵՒ ՄԵՐՕՐԵԱՅ Հ.Մ.Ը.Մ.

«ՎԱՐԺԱՊԵՏ ԵՒ ՖՈՒԹՊՈՒ... ԻՆՉ ԽԱՂՔՈՒԹԻՒՆ»

ՈՎ հարուածեց չեմ յիշեր, բայց գնդակը աջ կողմէն ուղարկուեցաւ դէպի մրցակից խումբին բերդը, որուն մօտերը կը գտնուէի ես: Բերդապահը փորձեց կանխել վտանգը եւ բերդէն դուրս ելլելով ուզեց յափշտակել գնդակը կամ հեռացնել զայն, բայց գնդակը սարդեցաւ ձեռքէն եւ կեցաւ ոտքերուս առջեւ: Ես կը գտնուէի պարապ բերդէն հագիւ երկու մեթր հեռաւորութեան վրայ, բոլորովին մինակ ու ազատ՝ յետսապահներու հսկողութենէն: Արդէն դուրսէն կը լսուէին «400000՝, 400000՝» ուրախ-աղմկալից բացազանչութիւններ, կը բաւէր որ աջ ոտքիս ներսի երեսով մեղմօրէն հպէի գնդակին, որպէսզի անիկա գլտորուէր դէպի ներս, դէպի յաթանակ...

Բայց այդպէս չեղաւ: Մօտալուտ յաղթանակի յուզումէ՞ն արդեօք, ստեղծուած անակնկալ բախտաւորութեան շփոթութենէ՞ն թէ... վարժապետական անճարակութենէն՝ գնդակը չարաճճի մանուկի պէս ցատկոտելով ուղղուեցաւ դէպի բերդ եւ... դուրս ելաւ գերանին քսուելով, կարծես կ'ուզէր հեզնել զիս եւ իրապաշտութեան դաս տալ բոլոր անոնց, որոնք կը յոխորտան նախքան յաղթանակի նուաճումը:

Մենք այսօր գիտենք, որ նման վրիպում կամ ձախաւերու-

թիւն կը պատահի, պատահած է նոյնիսկ աշխարհահռչակ ֆուլթպոլիստներուն, Սպանիոյ կամ Իտալիոյ մէջ, Պրազիլ կամ Արժանթին, բայց այդ օր, այդ մրցումին օրը, ինչ որ պատահեցաւ դաշտին վրայ, աղէտ մըն էր կարծես, ողբերգութիւն մը... վարժապետի մը՝ որ ես էի, ամօթաբեր մէկ արարքը, որ մրցախաղի ամէնէն լարուած մէկ պահուն, անկրկնելի առիթ մը կը փճացնէր այսպէս, յուսախաբութիւն պատճառելով դաշտի իր խաղակիցներուն թէ դուրսի համակիր մարզասէրներուն:

Ես ի՞նչ ըրի, ի՞նչպէս ըրի ձեռք բերելու համար այս... ձախորդութիւնը: Չեմ գիտեր: Ճարապլուսի վաղեմի մեր մարզիչը՝ Սարգիս Պալապանեան, մեզի սորվեցուցած էր գնդակին հարուածելու հիմնական երկու ձեւ. մէյ մը՝ ոտքին դուրսի երեսով, ուժգին կերպով հարուածելու համար դէպի մրցակից բերդը, եւ մէյ մըն ալ՝ ոտքին ներսի երեսով, գնդակին ճշգրիտ ուղղութիւն տալու եւ զայն փոխանցելու համար խաղընկերոջ մը: Շիփ-շիտակ, ոտքի մատներով, այսինքն կօշիկի «քիթով» երբեք: Կ'երեւի այս վերջին մեղքը գործած էի, որ գնդակը որոշեց պատժել զիս: Ամէն պարագայի, մենք այդ օր կորսնցուցինք հաւանական յաղթանակ մը:

Գիշերը, երբ հաւաքուած էինք պանդոկին մէջ, մեղմացած էին պահու ջղային հակազդեցութիւնները եւ հաւաքաբար սկսած էին մրցախաղի վերանայումն ու... քաջքուքները, Արամ Գրտանեան փաթթուեցաւ ինծի եւ թէ՛ միսթարութիւն, թէ՛ ցաւակցութիւն յայտնելու բարեկամական ցանկութեամբ բացազանչեց.- «Վարժապետ եւ ֆուլթպոլ... ի՞նչ խաղընկերն»:

- Ի՞նչ ֆուլթպոլ, ինչ բան, վրայ բերաւ Ղեւոնդ Նալպանտեան ինդալով, վարժապետները սրճարան թող երթան պլոթ խաղալու...

Լիուլի իրաւունք ունէին մարդիկը: Մրցումը վերջ գտած էր գերօ-գերօ հաւասարութեամբ:

Ասիկա պատահեցաւ Հալէպի մէջ տեղի ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային հանդիպումներէն մէկուն, Նոր Գիւղի Նաւասարդեան դաշտին վրայ, երբ իրարու հետ կը մրցէին Տէր Զօրի եւ





Պուրճ Համուտի խումբերը: Պուրճ Համուտի զորաւոր կազմին դէմ հաւասարութիւն ձեռք բերելը ինքնին պատուաբեր էր անշուշտ Տէր Զօրի համեմատաբար համեստ մեր խումբին համար, բայց ուրիշ է դաշտէն ելլել յաղթանակի հպարտութեամբ փայտղ աչքերով (մանաւանդ... պուրճ Համուտցիներու դէմ) եւ երջանկօրէն գիրկընդխառնուիլ բարեկամներու հետ: Յետոյ, որեւէ՛ մրցանքի մէջ կա՛յ մէկը, որ կը սիրէ կորսնցնել խաղը, կամ մխիթարուիլ հաւասարութեան անշուք արդիւնքով, հոգ չէ թէ մրցակիցը ըլլայ եղբայրը, հայրը, նոյն դրօշին տակ խաղացող մարզիկ մը... Ամէն պարագայի, գիշերը, տէր զօրցիներս ինքնագոհութեամբ մտանք թառելի Եռսուֆի ճաշարանը եւ Պուրճ Համուտի մարզիկներուն հետ երգով եւ ուրախութեամբ տօնախմբեցինք մեր... հաւասարութիւնը, որ կը նշանակէր մեր բոլորին յաղթանակը...

Բայց ես ճամբայ ելած էի պատմելու համար ուրիշ բան. Մրցումը սկսելէ առաջ, երբ խաղացողները շարուած էին դաշտին կեղրոնը, տեղի ունեցաւ անդամատետրերու ստուգում (առաջին անգամ ըլլալով): Բացատրեմ. միջ-մասնաճիւղային խաղերուն մասնակցելու համար, կարգ մը մասնաճիւղեր, հասկնալիօրէն լրիւ կազմեր չունենալով, քանի մը հալչպցի խաղացողներով կ'ամբողջացնէին իրենց խումբը (Այս վերջիններն ալ հոգի կու տային մաս կազմելու համար խաղերուն, քանի Հալչպ ունէր հարիւրաւոր խաղացողներ, իսկ մրցումներուն պիտի մասնակցէին միմիայն 10-15 մարզիկներ): Պարզ է, այս պարագան որոշ անկանոնութիւն կը յառաջացնէր մրցումներու ընթացքին մէջ: Ըստ երեւոյթին, վերջ տալու համար այս սովորութեան, այդ տարի, կազմակերպիչ յանձնախումբը որոշած էր վերջ տալ այս դրութեան: Տէր Զօրի մեր կազմին մէջ կային... երկու հալչպցիներ՝ Սարգիս եւ Անդրանիկ:

Սարգիսը առանց դժուարութեան անցաւ մաքսային քննութենէն, բայց երբ քննիչը (եթէ չեմ սխալիր Յակոբ Օվայ-եանն էր) կանգ առաւ Անդրանիկին առջեւ, բացազանչեց.

- Բայց, տղա՛յ, դուն Հալչպի սկաուտական պատուոյ առաջինի խաղացող չե՞ս:

- Այո՛, պատասխանեց Անդրանիկ, բայց ես Տէր Զօր ծնած եմ, եղբայր Յակոբ:

- Կրնաս Տէր Զօր ծնած ըլլալ, բայց... ըսաւ «եղբայր Յակոբ» եւ կանգ առաւ, վարանեցաւ եւ սկսաւ մտածել...

Յայտնի էր որ կազմակերպիչ յանձնախումբի հաշուարկումներուն մէջ նման պարագայ չէր նախատեսուած: Ո՞վ ըսաւ, որ Հալչպի բոլոր ուժերը իր հարագատ սեփականութիւնն են եւ չեն... ներածուած չըջաններէն, որով անտրամաբանական չէ՞ր այս... հաւատաքննութիւնը:

Ու եղբայր Յակոբը տեղի տուաւ՝ արդարադատութիւն ընելով մասնաճիւղի մը, որ չէր ուզած բացակայ ըլլալ ազգային փառատօնէն: Միջ-մասնաճիւղային այս հանդիպումները միայն Փութպոլ չէին, ո՛չ ալ Հալչպ, Տէր Զօր, Հոմա կամ Թէլ Ապիատ ծնած ըլլալու մանրամասնութիւն...

Մնաց որ... Անցեալ դարու յիսունական թուականներուն, շուրջ վաթսուն ընտանիքներ կ'ապրէին Տէր Զօրի մէջ, երբ ես անմոռանալի Զարեհ Սրբազանի թելադրանքով ու կարգադրութեամբ հոն կ'ուղեւորուէի ստանձնելու համար տեղւոյն ազգային վարժարանին տեսչութիւնը: Դուք այս յօդուածէն ինչ տպաւորութիւն ալ կրէք, բան չի փոխուիր կացութիւնէն. քսանամեայ երիտասարդ՝ ես վարժապետական կոչումիս կը միացնէի նաեւ... Փութպոլային անխառն խանդավառութիւն մը: Այնպէս որ երիտասարդ ու մարզիկ ուսուցիչի մը Տէր Զօր ժամանումը ամէնէն աւելի ուրախութեամբ համակեց տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ականները:

Կարիք կա՛յ ըսելու, որ եղբրական այս քաղաքը՝ Տէր Զօր, խորհրդանիշն է երկու հակադիր եւ պատմական իրադարձութիւններու՝ մէկ կողմէ հայ ժողովուրդի նահատակութեան, եւ միւս կողմէն հրաշալի վերականգնումին: Այն քաղաքին մէջ, ուր հարիւրաւոր հայ մանուկներ ողջ-ողջ Եփրատին մէջ թափուեցան, քարայրներու մէջ թխմուած ուրիշներ կրակի տրուեցան, եւ վերապրողներէն շատեր կ'մախացան աւազներու վրայ կամ որդեգրուեցան ու ամուսնացան պետեւիներու հետ՝ կարենալ ապրելու համար, այսօր (այդ օրերուն), գոյութիւն ունէր համերաշխ գաղութ մը, ուր կը գործէին եկեղեցի, դպրոց, թաղականութիւն եւ հոգաբարձութիւն, Սուրիահայ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Պատրիկ Կիւլպենկեանի պետական պարգևատրման առիթով՝
 ●Եղբ. Ժիրայր Սարգիսեան \$ 300

Օգնութեան Խաչի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղեր: Երիտասարդական միակ կազմակերպութիւնը Հ.Մ.Ը.Մ.ն էր, որ իր շուրջ համախմբած էր տեղւոյն գրեթէ բոլոր երիտասարդները: Ուրեմն, եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ կիսամութ սենեակ մը իբրեւ ակումբ, փինկփոնկի սեղան, բակին մէջ պասքէթի փանիէ, Ֆութպոլի խումբ, սկաուտներ եւ գայլիկներ: Ժողով, եռուզեռ, մրցումներ տեղւոյն արաբական խումբերուն դէմ, արշաւներ եւ... «Յառաջ, նահատակ ցեղի անմահներ»:

Ժամանումիս յաջորդ օրը, երբ Գէորգ Բարսեղեանի նկարչատան մէջ հանդիպեցայ Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետ Ճանիկ Առաքելեանին, ծանօթութեան անխուսափելի հարցումփորձերէն ետք, յանկարծ երկուքը գրեթէ միաժամանակ հարց տուին ինծի.

Վարժապետ, պասքէթ կը խաղաս թէ ֆութպոլ...

Բայց վարժապետը զուրկ էր պասքէթի համար տարրական շնորհներէ՝ երկար հասակ եւ նիհար կազմ: Ուրեմն՝ ֆութպոլ:

Այդ տարին, Տէր Զօրի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը ունէր եօթը խաղացողներ միայն, վարժապետը եղաւ ութերորդը. Գէորգ Բարսեղեան, Յովհաննէս Տէր Սարգիսեան, Անդրանիկ Գրտանեան (ճարպիկ խաղացող մը, որ երբ Հալէպ փոխադրուեցաւ համալսարանական ուսման համար, սկսաւ խաղալ Հ.Մ.Ը.Մ. Հալէպի առաջին կազմէն), Ժան եւ Զուգու եղբայր-

ներ (մականունը կը խուսափի յիշողութենէս), Յովսէփ Միքայէլեան, Գրիգոր Յակոբեան եւ... ութերորդը՝ ես:

Ահաւասիկ թնճուկը: Ֆութպոլի խումբ մը կազմելու համար անհրաժեշտ էին նուազագոյն 11 մարզիկներ: Ի՞նչ ընել ուրեմն, կարելի՞ էր հրաժարիլ մօտալուտ Զատիկէն...

Ո՞վ չի գիտեր Հալէպի մէջ տարուէ-տարի տեղի ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային մրցումներուն արժէքն ու նշանակութիւնը: Ո՛չ միայն մարզական շարժումի մղում տուող ձեռնարկ մը, այլեւ կազմակերպական աշխուժութիւն ենթադրող հրաշալի բխում մը, ազգային յուզումի եւ հպարտութեան հաւաքական պայթում մը, որմէ չէր ուզեր զրկուիլ ո՛չ մէկ մասնաճիւղ՝ ութ ֆութպոլիստ ունենար թէ տասը սկաուտ...

Ի՞նչ ընենք հիմա Տէր Զօրի մասնաճիւղին... սրբե՞ք քարտէսէն:

Ողջ մնաս, եղբ. Յակոբ Օվայեան:

Ես հիմա հաճոյքով ու համակրանքով կը վերլիշեմ հնօրեայ Նաւասարդեան դաշտի բոլոր անցուղարձերը, Անդրանիկին (Աւրնեան) խորամանակ ժպիտը, Օվայեանին զարմանահար դէմքը, ողբացեալ Արամին եւ Ղեւոնդին խժժօժանքները, անոնց նուիրումն ու ծառայութիւնները, որովհետեւ բոլորն ալ մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի հաւաքական կենսագրութեան եւ յիշողութեան, ու կը հաւատամ, թանկագին ժառանգութիւն են մերօրեայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն համար...

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU


PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.

The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՖԻԱՅԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ «ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՀԱՅԵՐ»ՈՒՆ ՅԱՌԱԶՆԱՊԱՀ ԶՈԿԱՏԸ



ԲԼՅՈ ԵՍԱՊՈՎ

Խորուն Թիրազեան ՍՈՖԻԱ

73 տարիներ անցան Վլատայա գիւղին մէջ 1935ին տեղի ունեցած ընդհանուր բանակուէն, որուն Հ.Մ.Ը.Մ.Ի Փլովտիվի սկառուտի հանգամանքով մասնակցեցայ նաեւ ես: Վայրը կը ներկայացնէր մեծ եւ հրաշալի մարզագետին մը, համապատասխան բոլոր պահանջներուն Պուլկարիոյ մեծագոյն բանակումին՝ 288 մասնակիցներով: Գլխաւոր խմբապետը Պօղոս Քանթարեանն էր, Փլովտիվէն, պահեստի գնդապետ: Բանակումը այցելեցին գնդապետ Թրայանովը՝ պուլկար սկառուտներու հետը եւ Զանգեզուրի հերոս Զօր. Գարեգին Նժդեհ:

Բանակումին պաշտօնական բացումը նուիրուած էր պուլկար մեծ բանաստեղծ եւ հայ ժողովուրդի բարեկամ Բէյօ Եաւորովին, որ իր «Հայեր» անմահ եղերերգութեամբ տաղերգեց հայ ժողովուրդի կսկիծն ու անձկութիւնը: Բանակումը նուիրուած էր Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանի եւ անոր գործակիցին՝ Վռամչապուհ Քէնտիրեանի նահատակութեան 30ամեակին:

18 Օգոստոս 1935ին, Կիրակի առաւօտ, բանակավայրի բոլոր սկառուտները՝ Սոֆիայի, Փազարճիքի, Փլովտիվի, Սլիվէնի, Պուրկասի, Վառնայի եւ Ռուսէի մասնաճիւղերէն, իրենց դրօշակներով, փողերու եւ թմբուկներու առաջնորդութեամբ, առոյգ քայլերով ուղղուեցան «Պորխի» պուրակ: Մայրաքաղաքի կիրակնօրեայ բազմամարդ փողոցներու, մանաւանդ «Ազատարար Յար» պողոտային համար չտեսնուած սկառուտական շքերթ մը, զոր անցորդները ողջունեցին «Պուաւօ՛ հերոսներ» բացազանջութիւններով:

Յուշարձանին պաշտօնական բացումին զօր. Գարեգին

Նժդեհը, յուշարձանի կառուցման կոմիտէին նախագահը, բոցաշունչ ճառով մը ընդգծեց մեծ բանաստեղծին հայ ժողովուրդին հանդէպ ունեցած յարգանքն ու սէրը, որուն երախտիքը տեղադրուած է յուշարձանին պատուանդանին վրայ՝ «Երախտապարտ հայերէն»:

Յուշարձանը գործն է պուլկարահայ արձանագործ Գրիգոր Ահարոնեանի, որ 1946ին Պուլկարիայէն գաղթեց Հայաստան, ուր նշանակուեցաւ փրոֆէսօր-դասատու Հայկական Արուեստի Ակադեմիային մէջ:

Գողեր, մետաղեայ արձաններու կողոպտիչներ, չինայեցիկ Եաւորովի կիսանդրին: Բարեբախտաբար, ժամանակ մը վերջ կիսանդրին գտնուեցաւ եւ 19 Ապրիլ 1995ին պաշտօնապէս տեղադրուեցաւ իր պատուանդանին վրայ: Այս անգամ ալ Հ.Մ.Ը.Մ.Ի Սոֆիայի սկառուտները գործնական մասնակցութիւն բերին հանդիսութեան: Պաշտօնական բացումը կատարուեցաւ Պուլկարիոյ նախագահ Ժելիլո Ժելիլի ճառով: Հանդիսութեան ներկայ էին նախարարներ, երեսփոխաններ, բանաստեղծին ազգականները եւ մեծաթիւ քաղաքացիներ: Այս առիթով խօսք առաւ Ներքին Մակեդոնական Յեղափոխական Կազմակերպութեան (Վ.Մ.Բ.Օ.) նախագահ Սթոյան Պոյաճիեւը եւ բացայայտեց Եաւորովի գործօն մասնակցութիւնը Մակեդոնիոյ ազատագրական կռիւներուն՝ թուրքերուն դէմ: Սիրոյ եւ յարգանքի իր զգացումները արտայայտելով հայ ժողովուրդին հանդէպ, Պոյաճիեւը պատմեց հետեւեալ հետաքրքրական եւ քիչ ծանօթ պատմութիւնը-

Վ.Մ.Բ.Օ.ն, թրքական լուծի դէմ իր մարտնչումներուն ընթացքին, 1897ի գարնան վերջաւորութեան, անյետաձգելի կարիքը ունեցած է ռումբերու: Այդ նպատակով դիմած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որուն հետ եղբայրական գործակցութիւն ունեցած է: Ինչպէս որ կը սպասուի, պատասխանը եղած է դրական: Հ.Յ.Դ.ն յայտնած է, թէ պատրաստ է տրամադրելու անհրաժեշտ ռումբերը, սակայն

անոնց փոխադրութիւնը կարելի չըլլայ ճամբաներու խափանուած ըլլալուն պատճառով: Օգտակար դառնալու փափաքով, Հ.Յ.Գ. առաջարկած է Վ.Մ.Բ.Օ.ի տրամադրութեան տակ դնել երկու վարպետ-մասնագէտներ, որոնք կազմակերպեն անհրաժեշտ ուղւմբերու արտադրութիւնը: Եւ այսպէս, ըստ Եաւորովի խօսքերուն, Կոցէ Տեյչէֆի (հանրածանօթ առաջնորդը մակեդոնական յեղափոխական շարժումին) գաղափարը իրականացուցած է եւ բացուած է գործարան մը կամ արհեստանոց մը, ինչպէս կ'անուանէին մակեդոնացի յեղափոխականները, Իւրուչքի խրճիթները, Տլըհեօ, Սապլիար գիւղի Քիւսթէնտիլի շրջան: Վարպետները, մասնագէտ հայեր՝ Գրիգոր եւ Լեւոն, գորակցելով ազատագրութեան գաղափարին՝ կ'աշխատին անվճար: Գործարանին աշխատաւորները, փոխ ի փոխ, 7-20 հոգի, շոկատայիններ կը կոչուէին: Ժամանակամիջոցի մը ընթացքին, 1897ի Մայիս 1էն մինչեւ 1898ի Հոկտեմբերը, այսինքն 18 ամսուան ընթացքին կը պատրաստուին մօտ 1500 ուղւմբեր, որոնք գերեզմարեալ Մակեդոնիան կը սասանեն շարք մը պայթումներով (Անկիւսթա գետի կամուրջը, երկաթուղագիծը եւ փապուղին, Փրանսական «Կուստալքիվիր» նաւը, Սելանիկի Պանք Օթոմանը եւ այլն): Պոյաճիւր առիթը չէր փախցներ այս պատմութիւնը պատմելու պուրկար թէ հայկական գանազան ձեռնարկներու ընթացքին:

Վիտոշ լեւան «Օֆէլիթէ» կոչուած վայրը կայ շատ գեղեցիկ մարգագետին մը՝ «Եաւորով» կոչուած: Այստեղ, Ժայռի մը վրայ ամրացուած է Բէյօ Եաւորովի կիսանդրին, որ սակայն լեռնային խիստ մթնոլորտի ազդեցութեան հետեւանքով նշանակելիօրէն վնասուած է:

Վիտոշ կատարած այցելութիւններէս մէկուն, «Զլաթնի մոսթովէ» (Ոսկեղէն կամուրջներ), նկատեցի արտասովոր ոգեւորութիւն մը անսովոր աշխատանքային օրուան մը ընթացքին: Անակնկալօրէն տեսայ արձանագործ Գրիգոր Ահա-



1927. Սքարա Զակորայի մասնաճիւղի անդամներ:

րոնեանը, ընկերակցութեամբ Պուրկարիոյ զբօսաշրջիկային ընկերակցութեան փոխ նախագահ Փէքօ Թաքովի: Տեղեկացայ, որ եկած են Եաւորովի Հայաստանէն բերուած նորակառույց մարմարեայ կիսանդրին պաշտօնական բացումին: Աճապարեցի «Եաւորովի մարգագետին»ը եւ ներկայ եղայ շատ սիրուն հանդիսութեան մը՝ պուրկար եւ հայ ընկերակցութեան: Աղուոր համերգ մը ներկայացուց «Լեռնական երգ» երգչախումբը: Բնական է արտասանուեցան ճառեր: Իր արտասանած ճառին մէջ, Գրիգոր Ահարոնեան յայտնեց, որ կը յուսայ հայ եւ պուրկար ընկերակցութիւնը ամուր ըլլայ, ինչպէս որ պուրկարական կրանիթէ կիսանդրին շողկապւած է հայկական մարմարին:

Սոֆիայի «Վիտոշ» պողոտային 26 թիւին կը գտնուի բնակարանը, ուր ապրած եւ ստեղծագործած է Եաւորով բանաստեղծ-յեղափոխականը: Հարթաքանդակին գետեղման հանդիսութեան ներկայ եղած են Հ.Մ.Լ.Մ.ի Սոֆիայի սկաուտները:

Ամէն տարի, Օսմանեան Թուրքիոյ կողմէ ծրագրուած եւ գործադրուած Հայկական Յեղասպանութեան տարելիցին, երախտապարտ հայեր կը ձեռնարկեն խաղաղապահ տողանցքի՝ «Անձանօթ զինուոր»ի գերեզմանէն մինչեւ Բէյօ Եաւորովի տուն-թանգարանը, ուր կը կազմակերպուին սգահանդէսներ: Յետոյ, այցելութիւն կը արուի հայկական գերեզմաններու կողքին գտնուող մեծ բանաստեղծին շիրմը, գետեղելու համար ծաղկեփունջեր: Այս ձեռնարկներուն գործօն մասնակցութիւն կը բերեն Հ.Մ.Լ.Մ.ի Սոֆիայի սկաուտները:

Ահա թէ ինչու Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտները իրաւամբ կրնան նկատուիլ «Երախտապարտ հայեր»ուն յառաջապահ ջոկատը:



1926. Պագարգիի մասնաճիւղի անդամներ: Զախին, ոտքի կանգնած՝ մասնաճիւղի երկարամեայ խմբապետ եղբ. Մինաս Մինասեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան կը փոխանցէ իր խօսքը:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ 30ԱՄԵԱԿԻ ՀԱՃԵԼԻ ԵՐԵԿՈՆ

մակիրները, որոնք վարժ են նմանօրինակ թուականներու ու ձեռնարկներու, ծանօթ են նաեւ անոր մթնոլորտին, լեցուցած էին «Տիամանթէր» սրահը:

Ձեռնարկին սկիզբը յաւուր պատշաճի կատարուեցաւ պաշտօնական բաժինը, ուր վարչութեան անունով բարի գալուստի խօսք ուղղեց եղբ. Վարանդ Պաղտասարեան: Ան շեշտեց Կեդրոնական Վարչութեան ներկայութիւնը, ապա մատնանշեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 2007ի ձեռնարկները նուիրուած են մասնաձեռնարկին հիմնադրութեան 30ամեակին: Եղբայրը անդրադարձաւ 30 տարուան փորձառութեան, որ «ունեցաւ թերութիւններ եւ դժուարութիւններ, սակայն կարողացաւ զանոնք յաղթահարել շնորհիւ ծառայելու եւ նուիրումի պատրաստ տղոց հաւատքին, անոնց ցուցաբերած նիւթական զոհո-

ղութիւններուն, հասկացողութեան եւ միութենական սիրոյն»: Եղբ. Վարանդ Պաղտասարեան հաստատակամութիւն յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը պիտի շարունակէ իր սկսած գործն ու առաքելութիւնը եւ յոյս յայտնեց, որ նոր սերունդը աւելի բարգաւաճ օրերու կը հասցնէ մասնաձեռնարկը:

Այնուհետեւ խօսքը տրուեցաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեանին, որ իր ուրախութիւնը յայտնեց Կեդրոնական Վարչութեան լրիւ կազմով Փարիզ ներկայութեան համար եւ այս առիթով իր բարեմաղթութիւնները փոխանցեց 30ամեայ յոբելեար մասնաձեռնարկին:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան կողմէ մասնաձեռնարկի 30ամեակի յուշանուէրներ յանձնուեցան Կեդրոնական Վարչութեան անդամներուն:

Երեկոյին երաժշտական բաժինը ճոխացած էր ջութակի ներկայութեամբ, զոր հմտօրէն մատուցեց Վարուժան Նազարեան:

Ժամը բաւական յառաջացած էր. այլեւս սրտաբուխ էին մեկնաբանութիւնները՝ հայկական հին թէ նոր երգերու: Օրուան երգիչը իր տեղը զիջած էր Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու, որոնք այնքան հաճելի ձեւով քակեցին հայկական երգերու շղթան, վերապրեցնելով զանոնք:

Ընտանեկան մթնոլորտ, ընկերային հանդիպումի պահեր, մտերմութիւն. արդեօ՞ք այդ չէր ձեռնարկին նպատակը...



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները կը պատրաստուին մասնաձեռնարկին կողմէ յուշանուէրներ ստանալ:



Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ԱՆՑՆՈՂ ՏԱՐՈՒԱՆ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հ .Մ.Ը.Մ.-Ֆրանսի անցնող տարուան վարչութիւնը ունեցաւ հնգանդամ կազմ.-
 Ատենապետ- եղբ. Հրաչ Սիսեոեան
 Փոխ-ատենապետ- եղբ. Վարանդ Պաղտասարեան
 Ատենադպիր- քոյր Ռիթա Իսահակեան
 Հաշուապահ- եղբ. Նազո Նաճարեան
 Գանձապահ- եղբ. Յարութ Պազգայեան
 Մասնաճիւղին գործունէութիւնը պարզեց հետեւեալ պատկերը.-



Ա) ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆ
 Սկաուտական կիրակնօրեայ գործունէութեան վայրը մնաց Փարիզեան շրջան՝ Ռանսիի «Դպրոցասէր» վարժարանը, Կիրակի օրերը ժամը 11էն 15:

Շարունակուեցան շեփորախումբի փորձերը, ուսուցիչ Եդուարդ Բարսեղեանի հսկողութեամբ:

●Վարչութեան նշանակումով ընդհանուր խմբապետի պաշտօնը վարեց եղբ. Պօղոս Մահպուկեան: Վարչական ներկայացուցիչներ՝ եղբայրներ Նարեկ Արթինեան եւ Հարմիկ Օհանեան:

●Սկաուտ. Խորհուրդը յառաջացաւ հետեւեալ կազմով.- քոյրեր՝ Ռիթա Քիլեճեան, Գարօլին Շաքէլեան, եղբայրներ Շանթ Ժազէրեան, Արա Մատենեան, Ալպէր Մահպուկեան, Ռոյ Վարդեհեան եւ Շարլի Գարփաքեան: Օգնական եղբայրներ՝ Արամ Սիսեոեան եւ Վարանդ Ենիգոմշեան:

●Նախորդ տարիներու նման, այս տարի եւս, վարչութիւնը սկաուտներուն տրամադրութեան տակ դրաւ փոխադրական կառք մը, սկաուտները Ալֆորվիլէն եւ Փորթ Տորլէանէն փոխադրելու նպատակով:

●Այս տարեշրջանին սկաուտներուն թիւն է 58 հոգի, սակայն կիրակնօրեայ գործունէութեանց ընթացքին թիւը յաճախ տարուբերած է 40-45ի միջեւ:

●Սկաուտները ունեցած են 36 կիրակնօրեայ գործունէութիւն:

Սկաուտական ձեռնարկներ.-

●11 Դեկտեմբերին տեղի ունեցաւ ռալի մը, Քլամարի անտառին մէջ: Պատասխանատու կազմին կողմէ ծրագիրը

Մասնաճիւղին պատրաստողի խումբը:

նկատուեցաւ շահեկան, որովհետեւ անոր միջոցով կարելի դարձաւ սկաուտական գիտելիքներու ընդհանուր վերաքաղ մը կատարել (հետախուզական, կապ, կողմնացոյց...):

●«Կազանդի Օր»-ուան տօնակատարութիւնը տեղի ունեցաւ 17 Դեկտեմբեր 2006ին (ներկայ՝ 49 հոգի եւ Սկաուտ. Խորհուրդ):

Ծրագիրը ընդգրկեց ծառի զարդարում, խաղեր, Կազանդ Պապայի ժամանում եւ կապոցներու բաշխում:

●4 Մարտին, սկաուտները 52 հոգիով ներկայ գտնուեցան «Նաւասարդ» պարախումբի ելոյթին:

●1 Ապրիլին, Ծաղկագարդի առիթով, սկաուտները ներկայ գտնուեցան Աւնուվիլի, Ալֆորվիլի եւ Իսի լէ Մուլինոյի եկեղեցական արարողութեանց, իսկ Զատիկուան առիթով, նոյն եկեղեցիներուն դիմաց սկաուտ պատասխանատուներու կողմէ բաժնուեցան սկաուտական գործունէութիւնը ներկայացնող թուղթիկներ:

●«Հայաստանի տարուան» ծիրէն ներս կազմակերպուած ցուցահանդէսներու կարգին էր Փրանսական Լուվր թանգարանին մէջ Հայկական հոգեւոր գանձերու նուիրուած ցուցահանդէսը: 22 Ապրիլին, սկաուտները 40 հոգիով այցելեցին ցուցահանդէս:

●Կիրակի, 29 Ապրիլին, Իսէ լի Մուլինոյի մէջ կայացած Հայկական Յեղասպանութեան ոգեկոչման մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական կազմն (39 հոգի) ու շեփորախումբը:

Իսկ 24 Ապրիլի Փարիզի կեդրոնական ոգեկոչման հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը մասնակցեցաւ իր սկաուտներով եւ շեփորախումբով: Վերջինը առաջնորդեց քայլարշաւը:

●Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տարեկան ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ 8էն 16 Յուլիս 2007ին, Ժամպվիլի մէջ, մասնակցութեամբ 45 սկաուտներու: Բանակումը ունեցաւ դաստիարակչական եւ կազմակերպչական ծրագիր: Տեղի ունեցան սկաուտական եւ ընդհանուր զարգացման նիւթերով դասախօսութիւններ:

●14 Յուլիսին տեղի ունեցաւ «Այցելութեան օր»ը, 140է աւելի ծնողներու եւ բարեկամներու մասնակցութեամբ: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Լեոն Պաղտասարեան եւ Կաթողիկոսական Պատւիրակ՝ Փարիզի Առաջնորդ Գիւլտ Արք. Նաքթաշեան: Օրուան ընթացքին տեղի ունեցան սկաուտական տողանցք՝ շեփորախումբի մասնակցութեամբ եւ սկաուտական արարողութիւններ: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան անունով ելոյթ ունեցաւ աստեճապետ եղբ. Հրաչ Սիսեռեան: Այս առիթով իր օրհնութիւնը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Աւարտին կատարուեցաւ խորոկահանդէս:

Բ) ՊԱՍՔԷԹ

2006-2007 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս ներկայացաւ պասքէթի երկու խումբով. Ա. խումբը 16 հոգի եւ փոքրեր 5 հոգի: Մասնաճիւղը մասնակցեցաւ Փարիզի ախոյեանութեան: ումբին փորձերը տեղի կ'ունենան շաբաթը երկու անգամ, «Կլասիէր» դաշտին վրայ: Մրցումները եւս կը կատարուին նոյն դաշտին վրայ: Խումբին մօտ վարչական պատասխանատուն է եղբ. Մորիս Տէմիրճեան:

●2006-2007 տարեշրջանին վարչութիւնը խումբին համար մարզիչ նշանակեց եղբ. Հրաչ Սիսեռեանը, իսկ օգնական մարզիչ՝ եղբ. Հրաչ Մակարեանը:

Ֆետերասիոնէն ճշգրտած օրէնքներու համաձայն, պասքէթի խումբը ստիպուած էր ունենալու իր երկրորդ խումբը, արդ՝ պգտիկներու խումբին մարզումները կատարեց եղբ. Տաւրա Ապրիլեան:

Պասքէթի մարզիկները ներկայ գտնուեցան 26 Նոյեմբերին վարչութեան կողմէ կազմակերպուած սկաուտ-մարզիկներ հաւաքին, Ալֆորվիլի Մշակոյթի Տան մէջ:

●Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պասքէթի խումբը մասնակցեցաւ վարչութեան կազմակերպած «Մուրէն Մուրատեան» մրցաշարքին եւ գրաւեց Ա. դիրքը:

Պասքէթի խումբը մարզական իր տարեշրջանը աւարտեց եւ ֆետերասիոնի նոր որոշումով (խումբերու նոր դասաւորում) խումբը մնաց նոյն դասակարգին մէջ:



Մասնաճիւղից ֆուսպոլի Ա. խումբը:

Գ) ՖՈՒԹՊՈՒԼ

2006-2007 տարեշրջանին ֆուտպոլիստներու թիւն էր 52 մարզիկ, բաղկացած երկու խումբէ՝ առաջին եւ կրտսերներ:

Առաջին խումբին ընդհանուր մարզիչն էր եղբ. Ժան Փօլ Խորանեան, Նոյեմբերէն սկսեալ՝ եղբ. Աշոտ Խաչատրեան, իսկ կրտսերներու՝ եղբ. Յարութ Պապանազարեան: Վարչական ներկայացուցիչ՝ եղբ. Ժողովք Պետիկեան:

Վարչութիւնը յառաջացուց յանձնախումբ մը՝ բաղկացած հետեւեալ եղբայրներէն.- Անդրանիկ Պահարեան եւ Յարութ Հաճէաքեան: Իսկ կրտսերներու խումբին օգնական՝ ծնողներ:

Փորձերը տեղի կ'ունենային շաբաթը երկու անգամ:

Առաջին խումբը մասնակցեցաւ Հոթ Տը Սէնի ախոյեանական Դ. դասակարգի, բաժակի եւ Ֆրանսայի բաժակի խաղերուն: Առաջին խումբը նահանգային մրցումներու ծիրէն ներս տարեշրջանը աւարտեց գրաւելով իր դասակարգի 5րդ դիրքը:

Կրտսերներու խումբը մինչեւ Փետրուար 2007 մրցումներ ունեցաւ Հոթ Տը Սէնի ախոյեանական խաղերու ծիրէն ներս: 4 Փետրուարին, խաղի մը ընթացքին տեղի ունեցած անհաճոյ դէպքի մը լոյսին տակ, վարչութիւնը որոշեց կրտսերներու խումբը լուծել եւ անպատիժ մարզիկները մարզել Ա. խումբին հետ:

●Ֆուտպոլի մարզիկները ներկայ գտնուեցան 26 Նոյեմբերին վարչութեան կողմէ կազմակերպուած սկաուտ-մարզիկներ հաւաքին, Ալֆորվիլի Մշակոյթի Տան մէջ:

●Իսի լէ Մուլինոյի մէջ, 31 Մարտին, «Հայաստանի Տարւան» ծիրէն ներս տեղի ունեցաւ ֆուտպոլի մրցում մը, զոր իրարու դէմ հանեց հայազգի յայտնի մարզիկներու (Ե. Ճորքայէֆ, Ա. Պօղոսեան) եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն չորս մարզիկներու միացեալ խումբը Ֆրանսական պատկերասփիւռի երկրորդ կայանի մարզական թղթակիցներուն դէմ: Արդիւնք՝ 5-0 յաղթանակ, ի նպաստ հայկական խումբին: Կոլերէն երեքը նշանակեցին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզիկները:



Ֆուտբոլի Ա. խումբը մասնակցեցաւ վարչութեան կազմակերպած «Սուրէն Մուրատեան» մրցաշարին եւ գրաւեց Ա. դիրքը: Խումբը մասնակցեցաւ նաեւ 6-9 Ապրիլին ժընեւի մէջ տեղի ունեցած մրցաշարին եւ 24 խումբերու մէջ գրաւեց երկրորդ դիրքը:

Դ) ՎԱՐՁԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

26 Նոյեմբեր 2006ին, վարչութեան կողմէ կազմակերպուեցաւ սկաուտ-մարզիկներու հաւաք-ընթրիք մը, Ալֆրիդի Մշակոյթի Տան մէջ: Ընթրիքին ներկայ գտնուեցաւ 50 հոգի: Ցուցադրուեցաւ ժապաւէն մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հիմնադրութեան նուիրուած: Վարչութեան կողմէ խօսք առաւ եղբ. Հրաչ Մխեռեան:

●Վարչութիւնը կազմակերպեց իր տարեկան պարահանդէսը (30ամեակի տարուան առաջին ձեռնարկ), 13 Յունուար 2007ին, «Մերիտիան» պանդոկին մէջ: Պարահանդէսին ներկայ գտնուեցաւ 427 հոգի:

●Համաձայն տարեկան ծրագրի նախատեսութեան, 31 Մարտին տեղի ունեցաւ «Ուրախ երեկոյ» մը Տիամանթէրի մէջ: Երեկոյին ներկայ գտնուեցաւ 120 հոգի: Միջնորդը հաճելի էր, ձեռնարկը՝ յաջող:

●13 Մայիս 2007ին, վարչութեան հրաւերով գումարուեցաւ մասնաճիւղին արտակարգ 33րդ ընդհանուր ժողովը, Հ.Մ.Ը.Մ.ի Գրդ. Պատգամաւորական Ժողովի օրակարգով:

Մրցաշարք եւ պարահանդէս

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 30ամեակին նուիրուած միջ-եւրոպական մրցաշարքը՝ «Սուրէն Մուրատեան» բաժակը տեղի ունեցաւ 17-19 Մայիսին, Փարիզեան շրջան՝ Իսի լէ Մուլինոյի մէջ:



Մասնաճիւղին շեփորախումբը:

Մրցաշարքին մասնակցեցան Գանատայի, Լոնտոնի, Պուտաֆէշթի եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը, նաեւ՝ Զուիցերիոյ Հայկական Միութիւնն ու Գերմանահայ Միութիւնը:

Մրցաշարքը ընթացաւ միութեանկան միջնորդի մէջ:

●Սկաուտական ընդհանուր բանակումի «Այցելութեան օր»-ուան ընթացքին, 14 Յունիս 2007ին, վարչութիւնը կազմակերպեց հիւրասիրութիւն:

●19էն 23 Սեպտեմբեր 2007ին, Հայաստանի մէջ գումարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գրդ Ժողովը: Մասնաճիւղին պատգամաւորները մասնակցեցան ժողովին, որուն ղեկոյցը փոխանցեցին վարչութեան:

Չամացանց

Կայքէջը ունեցաւ իր նոր հասցէն: Հոն տեղադրուեցան նորութիւններ՝ նկարներ, երգեր, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մասին տեղեկութիւններ եւ այլն:

Կայքէջին մէջ տեղ գտան մասնաճիւղին ձեռնարկներուն ծանուցումները, նաեւ՝ մարզական եւ սկաուտական գործունէութիւնները:

Ե) ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՁԱԿԱՆ

Վարչութիւնը յարաբերական անմիջական կապեր ունեցաւ քոյր եւ այլ միութիւններու հետ, այսպէս՝

- Մասնակցեցաւ Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Համակարգումի Խորհուրդի (CCAF) ժողովներուն եւ ստանձնեց Հայկական Յեղասպանութեան նուիրուած ձեռնարկի մը մէկ բաժինը:

- Ներկայ գտնուեցաւ Իսի լէ Մուլինոյի շրջանի «Հայաստանի Տարուան» ծիրէն ներս մարզական մրցաշարքի կազմակերպման ժողովին:

- Նոյեմբեր 2006ին, վարչութեան թելադրանքով 4 ըսկաուտներ ներկայ գտնուեցան «Հայաստան» հիմնադրամի Ֆրանսայի ֆոնէթոնի աշխատանքներուն:

- Մասնակցեցաւ քաղաքապետարաններու կողմէ միութիւններու ի պատիւ տրուած հիւրասիրութիւններուն, Դպրոցասէրի դաշտահանդէսին:

- Փարիզ քաղաքի անունով Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզիկները իրենց մասնակցութիւնը բերին Համահայկական Դ. խաղերուն, Երեւան:

Զ) ԱՆԴԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 205 հոգի՝ հետեւեալ բաժանումով.- պատքէթ 16 հոգի, Ֆուլթալ 52 հոգի, սկաուտ 58 հոգի, անդամ 79 հոգի:



Մասնաճիւղին 30ամեակին նուիրուած «Սուրէն Մուրատեան» մրցաշարքին ֆութբոլի յանձնախումբը:



ՎԱԼԱՆՍԻ ՄԱՍՆԱԾԻԴԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՖՈՒԹՊՈՒԻ ԻՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀՄԸՄ-ի Վալանսի մասնաճիւղը մեծ թափով եւ խանդավառութեամբ ըսկրսաւ 2007-2008 տարեշրջանի իր աշխատանքներուն: Մասնաճիւղին վարչութիւնը ուրախութեամբ նկատեց իր մարզական շարքերուն ստուարացումը: Արդարեւ, մասնաճիւղին մարզիկներուն թիւը առաջին անգամ ըլլալով կ'անցնի 45ը: Մասնաճիւղին ֆուլթպոլի առաջին խումբը, 11 մրցումներէ ետք, կը գրաւէ իր խմբակին առաջին դիրքը, իսկ երկրորդ խումբը՝ իր խմբակին երկրորդ դիրքը:

Խանդավառութիւն նկատելի է նաեւ ՀՄԸՄ-ի համակիրներուն մօտ, որոնք ամէնուրեք հոծ բազմութեամբ կը հետեւին իրենց սիրելի խումբին խաղերուն:

Տեղին է նշել, որ մասնաճիւղին ատենապետ եղբ. Պօղոս Տէրտէրեան իր մասնակցութիւնը բերաւ ՀՄԸՄ-ի Ծրդ Պատգամաւորական Ժողովին, Հայաստան: Վերադարձին, ան ընդհանուր տեղեկութիւններու տուաւ միութեան յառաջիկայ քառամեակի ծրագիրներուն մասին:

Այս տարեշրջանին, մասնաճիւղին վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն-

- Ատենապետ- եղբ. Պօղոս Տէրտէրեան
- Փոխ ատենապետ- եղբ. Վահէ Կօշկարեան
- Ատենադպիր- քոյր Քրիստին Տէրտէրեան
- Գանձապահ- եղբ. Փաթրիք Տէրտէրեան
- Մարզական պատասխանատու- եղբ. Քլոս Ազարեան
- Գոյքապահ- եղբ. Ռոպէրթ Միթիլեան:



Ֆուլթպոլի առաջին խումբը: Ոսքի, ծախէն աջ՝ Արամ Սարգիսեան, Զլոտ Ազարեան, ատենապետ Պօղոս Տէրտէրեան, Անթոնի Սաֆարեան, Տէնի Պոյաճեան, Մաթիօ Ազարեան, Բաֆֆի Կօշկարեան, ճորճ Գասապեան, Թումա ճուպուրեան, Անթօ Օհանեան, մարզիչ Միշէլ Բէլլակորեան, Ալէն Մնացիկեան եւ Նոէլ Տէրտէրեան:
Նստած, ծախէն աջ՝ Սազօ Եթերեան, Վահէ Քոստանճեան, Ժողէֆ Բառաքելեան, Յամբիկ Յովսէփեան, Յարութ Տէրտէրեան, Մայք Բրոսօ, Յակոբ Տէրտէրեան եւ Փաթրիք Տէրտէրեան:



Ֆուլթպոլի երկրորդ խումբը: Ոսքի, ծախէն աջ՝ մարզիչ Վահէ Կօշկարեան, Լուսինէ Չալիքեան, Յոլակ Խազարեան, Նոէլ Տէրտէրեան, Լեւոն Տոլրէեան, Ժան ճուպուրեան, Բրիսթօ Տէրտէրեան, Մայք Սակճեան, Շարլի ճուպուրեան, Կարօ Ստեփանեան, Տէնի Պոյաճեան, Զլոտ Ազարեան, Ռուպեր Միթիլեան:
Նստած, ծախէն աջ՝ Վազգէն Ալաշեան, Յայկազ Իգասեան, Ֆրանք ճուպուրեան, Վահէ Քոստանճեան, Ռուբիկ Բիրազեան, Յարէթ Յակոբեան, Լոդիս Եղիքեան եւ Կարօ Շիրիմեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 37ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Ձարեհ Տերվիշեան ԹՈՐՈՆԹՕ

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի աւանդական մարզախաղերը 2007ին տեղի ունեցան Թորոնթոյի մէջ, 23-25 Նոյեմբեր 2007ին, նախաձեռնութեամբ ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Թորոնթոյի մասնաճիւղին:

Խաղերուն նախագահն էր հաւատաւոր ՀՄԸՄ-ական եղբ. Պարզեւ Պասմաճեան:

Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Արեւմտեան Միացեալ Նահանգներէն Օրէնճ Քաունթիի եւ Փասատինայի մասնաճիւղերը, Արեւելեան Միացեալ Նահանգներէն Փրովիտընսի եւ Ուաշինկթընի մասնաճիւղերը, Անգլիոյ Լոնտոնի մասնաճիւղը, Գանատայէն Մոնթրէալի, Քէմպրիճի եւ հիւրընկալ Թորոնթոյի մասնաճիւղերու մարզական խումբերը:

37րդ մարզախաղերը կ'ընդգրկէին տղոց եւ աղջկանց պասքեթպոլի, սրահի ֆուլթպոլի, ֆլոր հաքիի, փինկ-փոնկի, ճատրակի եւ աթլետիկ մրցումներ:

Երեք օրերու ընթացքին, 300է աւելի մարզիկներ եւ մարզիկուհիներ, ՀՄԸՄ-ական ոգիով եւ եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ, մրցեցան իրարու հետ, տիրանալու համար յաղթանակի մետալներու եւ բաժակներու:

Մեծ էր խանդավառութիւնը եւ ոգեւորիչ: Յատկանշական էր մանաւանդ մեծ թիւով երիտասարդներու ներկայութիւնը մարզադաշտերուն մէջ: Անոնք եկած էին քաջալերելու ՀՄԸՄ-ը եւ մասնակցող բոլոր խումբերու մարզիկները, կրտսերներէն մինչեւ վեթերաններ, որոնք դաշտ կ'իջնէին յաղ-



Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բարզէն Կարապետեան յուշանուէրով մը կը պատուէ մարզախաղերու նախագահ եղբ. Պարզեւ Պասմաճեանը:

թելով վճռակամութեամբ, յաղթանակի բաժակ մը ապահովելու իրենց մասնաճիւղին:

ՀՄԸՄ-ի հիմնադրութենէն ի վեր մարզական միութիւն մը ըլլալէ աւելի դարձած է գաղափարական միութիւն մը, որ մարմնակրթութիւնը օգտագործած է եւ կը շարունակէ օգտագործել իբրեւ միջոց՝ հայ պատանին եւ երիտասարդը դաստիարակելով պատրաստելու վաղուան տիպար հայ մարդը:

ՀՄԸՄ-ի կողմէ կազմակերպուած խաղերը, ըլլան անոնք համա-ՀՄԸՄ-ական, միջ-մասնաճիւղային, Նաւասարդեան թէ շրջանի մարզախաղերու ձեւով, առաւել՝ սկստուտական բանակումները, միայն միջոցներ են նորահաս սերունդի գաւակները համախմբելու այս օտար եւ հեռուոր ամերուն, անոնց հոգիներուն մէջ դարբնելու մէկ ազգի եւ մէկ հայրենիքի պատկանելիութիւնը:

ՀՄԸՄ-ը հայ նորահաս սերունդի հոգիներուն մէջ զօրացուց հաւատքի, յոյսի, ապրելու եւ հայ մնալու գիտակցութիւնը եւ կը շարունակէ նոյն թա-

փով ու նոյն հաւատքով:

Այս խաղերուն առթիւ, Շաբաթ, 24 Նոյեմբերի երեկոյեան կազմակերպուած էր Յաղթանակի Խրախճանք՝ Հայ Կեդրոնի սրահին մէջ, ուր մարզիկներուն կողքին ներկայ էին նաեւ մեծ թիւով երիտասարդներ, որոնք միասանաբար անցուցին հաճելի երեկոյ մը:

Կիրակի, 25 Նոյեմբերի առաւօտեան սկսան կիսաւարտական եւ աւարտական մրցումները՝ ՀՄԸՄ-ի մարզասըրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան: Տեղի ունեցան ֆուլթպոլի 3 մրցումներ՝ Թորոնթոյի եւ Մոնթրէալի կրտսեր տղոց, Մոնթրէալի եւ Թորոնթոյի աղջիկներու, Քէմպրիճի եւ Թորոնթոյի երէց տղոց խումբերուն միջեւ, իսկ վերջին մրցումը կատարեց Փրովիտընսի եւ Փասատինայի պասքեթպոլի երէց տղոց խումբերուն միջեւ:

Խաղերու աւարտին, ՀՄԸՄ-ի մարզասրահ մուտք գործեց պատուոյ շքախումբը, գլխաւորութեամբ 37րդ մարզախաղերու նախագահ եղբ. Պարզեւ Պասմաճեանի, Սիփան Վրդ. Քէչչճ-

եանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեանի, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Գրիգոր Շիթիլեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեանի: Անոնց կը հետեւէին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Մանուէլ Հալլաճեան եւ Հրաչ Տէր Սարգիսեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամներ Վարուժան Պաստաճեան եւ Զոհրապ Թաթիկեան, ՀՕՄի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Գեղուհի Պաստաճեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Գաբրիլ Խաչատուրեան, Հ.Յ.Դ. «Ս. Թեւկրեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ճանպազեան եւ անդամ Անդօ Խաչատուրեան, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Զարեհ Տէրվիչեան, Շրջանային Վարչութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ վարչականներ:

Հանդիսութիւնը սկսաւ աւանդական տողանցքով, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի սկաուտական շեփորախումբին, որ ազգային եղանակներով թնդացուց Հ.Մ.Ը.Մ.ականներով եւ Հ.Մ.Ը.Մ.ի քաջալեր բարեկամներով լեցուն մարզասրահը եւ խռովեց շատերուն սրտերը:

Օրուան հանդիսավարներն էին քոյր Լուի Սարգիսեան եւ եղբ. Յակոբ Սարգիսեան, որոնք լաւապէս վարեցին հանդիսութիւնը:

Գանատայի Միացեալ Նահանգներու, Անգլիոյ եւ Հայաստանի քայլերգներէն ետք, բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Զարեհ Տէրվիչեան, ապա խօսքեր արտասանեցին Հ.Յ.Դ. «Ս. Թեւկրեան» կոմիտէի ներկայացուցիչ Անդօ Խաչատուրեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան:

Մէջընդմէջ եղան մետաղներու եւ բաժակներու բաշխում, յաղթական մարզիկներուն եւ խումբերուն: Կատարուեցաւ նաեւ յուշանուէրներու փոխանակում:

Հանդիսութեան ընթացքին ելոյթ ունեցան Թորոնթոյի մասնաճիւղի մարտարուեստի մարզիկները, իսկ Թորոնթոյի Համազգայինի «Արսէն Ղարիպեան» պարախումբը ներկայացուց «Թամզարա» պարը:

Այս առթիւ, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեան յատուկ յուշանուէրով մը պատուեց 37րդ մարզախաղերու նախագահ եղբ. Պարգեւ Պասաճեանը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Սիփան Վրդ. Քէչէճեանի «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով, կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ ներկաներուն:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yarm Artus-Bertrand / Agence wue du Ciel. Licence 075 960331. Studio/ICCB 2015/1405

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՊԱՍԵԹՊՈԼ

Երեց տղաք
Երեց աղջիկներ
Կրտսեր աղջիկներ
Կրտսեր տղաք

ԱԽՈՅԵԱՆ
Փրովիտընս
Մոնթբեալ
Թորոնթո
Թորոնթո

ՖՈՒԹՊՈԼ

Երեց տղաք
Կրտսեր տղաք
Փոքր տղաք
Աղջիկներ
Վեթերաններ

ԶԵՄԱՅԻՆ
Մոնթբեալ
Մոնթբեալ
Թորոնթո
Թորոնթո

ՖԼՈՐ ՅԱԶԻ

Տղաք

Մոնթբեալ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Կրտսեր տղաք

Առաջին- Կարպիս Կարապետեան (Մոնթբեալ)
Երկրորդ- Արամ Հալլաճեան (Թորոնթո)
Երրորդ- Շանթ Աֆարեան (Մոնթբեալ)

Երեց տղաք

Առաջին- Յակոբ Գաբրիելեան (Մոնթբեալ)
Երկրորդ- Վահիկ Ղարախանեան (Թորոնթո)
Երրորդ- Մանուէլ Աֆարեան (Մոնթբեալ)

ՃԱՏՐԱԿ 12 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ

Առաջին- Ատոմ Թաշճեան (Թորոնթո)
Երկրորդ- Րաֆֆի Գըլըպոզեան (Թորոնթո)
Երրորդ- Նուպար Նախնիքեան (Թորոնթո)



Փակման հանդիսութեան ներկայ պաշտօնական հիւրերը:

ԱԹԼԵԹԻՉՄ 60 Մ. ՏՂԱՔ

Երեց

Առաջին- Վահե Մարունեան (Մոնթբեալ)
Երկրորդ- Կարեն Եղիազարեան (Թորոնթո)
Երրորդ- Փիթըր Անտոնեան (Մոնթբեալ)

Կրտսեր

Առաջին- Գրիգոր Շահինեան (Մոնթբեալ)

Փոքր

Առաջին- Արմէն Շիրինեան (Թորոնթո)
Երկրորդ- Արի Տաղլեան (Մոնթբեալ)
Երրորդ- Արա անամիրեան (Մոնթբեալ)

Ծիլ

Առաջին- Արէն Բաբիսեան (Թորոնթո)
Երկրորդ- Ճոնաթան Առոյեան (Թորոնթո)
Երրորդ- Տարօն Մուրատեան (Թորոնթո)

60 Մ. ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Նայիրի Մանուկեան (Թորոնթո)
Երկրորդ- Անիթա Իսկէնտերեան (Մոնթբեալ)

Կրտսեր

Առաջին- Մարինա Փիլիպոսեան (Թորոնթո)
Երկրորդ- Մելանի Չենալեան (Մոնթբեալ)
Երրորդ- Մարի Յովաննեսեան (Մոնթբեալ)

Ծիլ

Առաջին- Թամար Թելեան (Թորոնթո)
Երկրորդ- Անոյ թաշճեան (Թորոնթո)
Երրորդ- Աննա Մանուկեան (Թորոնթո)



Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կտիկեան կ'արտասանէ իր խօսքը:

200 Մ. ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Փիթըր Աստոնեան (Մոնթրեալ)
 Երկրորդ- Կարեն Եղիազարեան (Թորոնթո)
 Երրորդ- Ալեքս Խինելեան (Մոնթրեալ)
 Միքայել Թեճիրեան (Մոնթրեալ)

Կրտսեր

Առաջին- Գրիգոր Շահինեան (Մոնթրեալ)
 Երկրորդ- Տիրան Բարնաքեան (Թորոնթո)
 Երրորդ- Վահան Յովաննեսեան (Մոնթրեալ)

Փոքր

Առաջին- Արմեն Պալեոզեան (Թորոնթո)
 Երկրորդ- Արմեն Շիրինեան (Թորոնթո)
 Երրորդ- Արա Խանամիրեան (Թորոնթո)

200 Մ. ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Նարե Էտճու (Թորոնթո)
 Առաջին- Նայիրի Մանուկեան (Թորոնթո)
 Երկրորդ- Անիթա Իսկենտերեան (Մոնթրեալ)

Կրտսեր

Առաջին- Մարինա Փիլիփոսեան (Թորոնթո)
 Երկրորդ- Մելանի Չենալեան (Մոնթրեալ)
 Երրորդ- Մեղեդի Մինասեան (Թորոնթո)

150 Մ. ՏՂԱԶ

Ծիլ

Առաջին- Արեն Բաքիսեան (Թորոնթո)
 Երկրորդ- Ճոնաթան Առոյեան (Թորոնթո)
 Երրորդ- Տարոն Սուրատեան (Թորոնթո)

150 Մ. ԱՂՋԻԿՆԵՐ

Ծիլ

Առաջին- Թամար Թելեան (Թորոնթո)
 Երկրորդ- Անոյ թաշճեան (Թորոնթո)
 Երրորդ- Աննա Մանուկեան (Թորոնթո)



**Հ.Մ.Ը.Մ.ի
 Գանատայի
 Շրջանային
 Վարչութեան
 ատենապետ
 եղբ. Բարգէն
 Կարապետեան**



600 Մ. ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Կարեն Եղիազարեան (Թորոնթո)
 Երկրորդ- Միքայել Թեճիրեան (Մոնթրեալ)

Կրտսեր

Առաջին- Տիրան Բարնաքեան (Թորոնթո)

Փոքր

Առաջին- Շահե Բաքիսեան (Թորոնթո)
 Երկրորդ- Ալեքս Օհանեան (Թորոնթո)

600 Մ. ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Նարե Էտճու (Թորոնթո)

Կրտսեր

Առաջին- Մեղեդի Մինասեան (Թորոնթո)
 Երկրորդ- Մելանի Չենալեան (Մոնթրեալ)

1000 Մ. ՏՂԱԶ

Կրտսեր

Առաջին- Տիրան Բարնաքեան (Մոնթրեալ)

1000 Մ. ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Նարե Էտճու (Թորոնթո)

Կրտսեր

Առաջին- Մեղեդի Մինասեան (Թորոնթո)

ԴՐՕՇԱՐՇԱՄ 4 x 100 ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Մոնթրեալ
 Երկրորդ- Թորոնթո

Կրտսեր

Առաջին- Թորոնթո



Ծիլ

Առաջին- Թորոնթո

ԴՐՕՇԱՐՇԱՒ 4 x 100 ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Թորոնթո

Ծիլ

Առաջին- Թորոնթո

ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ/ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Սերժ Կարապետյան (Մոնթրեալ)
Երկրորդ- Արեգ Զեօհնէլեան (Մոնթրեալ)

Կրտսեր

Առաջին- Սեպուհ Եագուպեան (Թորոնթո)

ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ/ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Անիթա Իսկենտերեան (Թորոնթո)

Կրտսեր

Առաջին- Կասիա Ենիգոմուլեան (Մոնթրեալ)
Երկրորդ- Թամար Մուրալեան (Մոնթրեալ)
Երրորդ- Դարա Ելոյեան (Մոնթրեալ)

ՄԵԿ ԶԱՅԼ ՈՍՏՈՒՄ/ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Վահէ Մարունեան (Մոնթրեալ)
Երկրորդ- Փիլըր Աստոնեան (Մոնթրեալ)
Երրորդ- Ռազմիկ Շահինեան (Թորոնթո)

Կրտսեր

Առաջին- Գրիգոր Շահինեան (Մոնթրեալ)
Երկրորդ- Վահան Յովաննեսեան (Մոնթրեալ)

Փոքր

Առաջին- Արմեն Պալեոզեան (Թորոնթո)
Երկրորդ- Արմեն Շիրինեան (Թորոնթո)
Երրորդ- Արա Խանամիրեան (Թորոնթո)

Ծիլ

Առաջին- Արեն Բաբխսեան (Թորոնթո)
Երկրորդ- Տարոն Մուրատեան (Թորոնթո)
Երրորդ- Ճոնաթան Ամոյեան (Թորոնթո)

ՄԵԿ ԶԱՅԼ ՈՍՏՈՒՄ/ԱՂՋԻԿՆԵՐ

Երեց

Առաջին- Նայիրի Մանուկեան (Թորոնթո)

Կրտսեր

Առաջին- Մարինա Փիլիփոսեան (Թորոնթո)



Երկրորդ- Թամար Մուրալեան (Մոնթրեալ)
Երրորդ- Կասիա Ենիգոմուլեան (Մոնթրեալ)

Ծիլ

Առաջին- Թամար Թելեան (Թորոնթո)
Երկրորդ- Անոյշ Աւագեան (Թորոնթո)
Երրորդ- Սերլի Բարնաքեան (Թորոնթո)

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ/ՏՂԱԶ

Երեց

Առաջին- Ռազմիկ Շահինեան (Թորոնթո)
Երկրորդ- Վահէ Մարունեան (Մոնթրեալ)

Փոքր

Առաջին- Արմեն Պալեոզեան (Թորոնթո)
Երկրորդ- Արի Տաղեան (Մոնթրեալ)

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ/ԱՂՋԻԿՆԵՐ

Կրտսեր

Առաջին- Կասիա Ենիգոմուլեան (Մոնթրեալ)

ԱԹԵԹԻՉՄԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱԼ

Առաջին- Թորոնթո
Երկրորդ- Մոնթրեալ

Մարզախաղերու տիպար մարզիկի մրցանակին արժանացաւ Փրովիտընսէն եղբ. Զորի Կարապետեան, իսկ տիպար մարզիկուհիի մրցանակին՝ քոյր Գարին Մերմեր: Տիպար մասնաճիւղի մրցանակին արժանացաւ Հ.Ա.Ը.Մ. Լոնտոն:

*Երեց՝ 18 տարեկանէն վեր, կրտսեր՝ 16-18 տարեկան, փոքր՝ 13-15 տարեկան, ծիլ՝ 11-12 տարեկան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Հ ա կ ա ո ա կ Իրաքի մէջ տիրող քաղաքական ու ապահովական ծանր պայմաններուն, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղը իր կարելին ի գործ կը դնէ ոչ միայն դժուարութիւններ յաղթահարելու, այլեւ՝ բոլոր մարզիկներն ու սկսողները համախմբելու եւ Իրաքի մէջ տեղի ունեցող տարբեր մարզախաղերու մրցաշարքերուն լաւ արդիւնքներ արձանագրելու համար:

Այդ հետեւողական աշխատանքին շնորհիւ է, որ վերջերս, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ տեղական մրցաշարքերուն արձանագրեց շատ կարեւոր արդիւնքներ:

Այսօր, Իրաքի ազգային հաւաքականներուն մէջ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ ունի 19 մարզիկ:



Իրաքի թենիսի աղջկանց ախոյեանքոյր Մարալ Խաչիկ Մինասեան:



Մասնաճիւղին պասքեթպոլի կրտսերներու խումբը:



Մասնաճիւղին պասքեթպոլի Բ. խումբը:

ՏՀօքի մէջ (Հիւսիսային Իրաք) տեղի ունեցած Իրաքի թենիսի աղջկանց ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ական Մարալ Խաչիկ Մինասեան հանդիսացաւ առաջին: Մարալ, որ ծնած է Պաղտատ (1984ին), առաջին անգամը է, որ յաջողութիւն կ'արձանագրէ:

Նոյեմբերին, ան Իրաքը ներկայացուց Եգիպտոսի մէջ տեղի ունեցած արաբական երկիրներու թենիսի աղջկանց ախոյեանութեան:

Իրաքի փոքրերու եւ կրտսերներու պասքեթպոլի ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի երկու խումբերն ալ տիրողսին տիրացան՝ իրենց կատարած բոլոր մրցումներուն յաղթանակներ արձանագրելով:

Իրաքի թենիսի աղջկանց խմբային ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. հանդիսացաւ առաջին: Պոլինկի տարբեր դասակարգերու մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. հանդիսացաւ առաջին եւ չորրորդ:

Պատմինթրնի ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. հանդիսացաւ երրորդ:

Քոնկ Ֆուլի արաբական ակումբներու ախոյեանութեան մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. գրաւեց պատուաբեր երրորդ դիրքը:



ԼԻՒԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ Կ'ԱՅՑՑԵԼԵՆ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐՈՒ



նաև որոշեցին, միշտ ձգտելով լավագույնին:

Բացման խօսքն էտք, զինուորները տողանցքով բարեկեցին սկաուտներուն եւ սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուցին բանակին առօրեայ գործունէութիւնը եւ պարտականութիւնը, ապա անոնք կենդանի պատկերով մը ներկայացուցին իրենց ռազմական կարողութիւնները: Այնուհետեւ, սկաուտները հիւրասիրուեցան իրենց համար պատրաստուած յատուկ վրանի մէջ:

Հիւրասիրութենէն էտք, մասնաճիւղի անդամներուն անունով խօսք առաւ փաղանգապետ եղբ. Անդօ Պալապանեան եւ ներկաներուն անունով շնորհակալութիւն յայտնեց զինուորներուն՝ իրենց տարած անխոնջ աշխատանքին համար: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ սիրալիր հիւրընկալութեան համար: Այցելութիւնը իր աւարտին հասաւ, երբ փաղանգապետ եղբայրը մասնաճիւղին անունով պատրաստուած յուշանուէրը յանձնեց զօրամասի հրամանատարին եւ անոր նուիրեց երէցական փողկապ: Սկաուտները հրաժեշտ

Մարիա Չոլաքեան ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրծ Համուտի մասնաճիւղի «Վիզէն Զաքարեան» երէց փաղանգի եւ «Շուշի» պարմանուհի փաղանգի սկաուտները Կիրակի, 25 Նոյեմբեր 2007ին, Լիբանանի անկախութեան տօնին առիթով այցելեցին Պուրծ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ գտնուող լիբանանեան բանակին:

Մասնաճիւղին զոյգ փաղանգները 20 անդամները, իրենց պատասխանատուներուն ընկերակցութեամբ, սիրալիր հիւրընկալութեամբ դիմաւորուեցան բանակի հարիւրաւոր անդամներուն կողմէ: Բանակայիններուն անունով բարի գալուստի խօսք արտասանեց զօրամասի հրամանատար՝ զնդ. Սեպա: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց սկաուտներուն, որոնք անկախութեան տօնին առիթով կը յիշեն բա-

նակը, կը զնահատեն եւ այս զնահատանքը կը ցուցաբերեն իրենց այցելութեամբ: Ան նաեւ նշեց, թէ ինչպէս բանակը իր պարտականութիւնը կը կատարէ՝ ապահովելով երկրին անվտանգութիւնը, նոյնպէս այլ ամէն սկաուտ պարտականութիւն ունի իբրեւ լիբանանցի անհատ՝ պահպանել բնութիւնը եւ ուշադիր ըլլալ երկրի մաքրութեան եւ օրի-





ԼԻՒԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ Կ'ԱՅՑՑԵԼԵՆ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐՈՒ



նաև որոշեցին, միշտ ձգտելով լավագույնին:

Բացման խօսքն էտք, զինուորները տողանցքով բարեկեցին սկաուտներուն եւ սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուցին բանակին առօրեայ գործունէութիւնը եւ պարտականութիւնը, ապա անոնք կենդանի պատկերով մը ներկայացուցին իրենց ռազմական կարողութիւնները: Այնուհետեւ, սկաուտները հիւրասիրուեցան իրենց համար պատրաստուած յատուկ վրանի մէջ:

Հիւրասիրութենէն էտք, մասնաճիւղի անդամներուն անունով խօսք առաւ փաղանգապետ եղբ. Անդօ Պալապանեան եւ ներկաներուն անունով շնորհակալութիւն յայտնեց զինուորներուն՝ իրենց տարած անխոնջ աշխատանքին համար: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ սիրալիր հիւրընկալութեան համար: Այցելութիւնը իր աւարտին հասաւ, երբ փաղանգապետ եղբայրը մասնաճիւղին անունով պատրաստուած յուշանուէրը յանձնեց զօրամասի հրամանատարին եւ անոր նուիրեց երէցական փողկապ: Սկաուտները հրաժեշտ

Մարիա Չոլաքեան ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրծ Համուտի մասնաճիւղի «Վիզէն Զաքարեան» երէց փաղանգի եւ «Շուշի» պարմանուհի փաղանգի սկաուտները Կիրակի, 25 Նոյեմբեր 2007ին, Լիբանանի անկախութեան տօնին առիթով այցելեցին Պուրծ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ գտնուող լիբանանեան բանակին:

Մասնաճիւղին զոյգ փաղանգները 20 անդամները, իրենց պատասխանատուներուն ընկերակցութեամբ, սիրալիր հիւրընկալութեամբ դիմաւորուեցան բանակի հարիւրաւոր անդամներուն կողմէ: Բանակայիններուն անունով բարի գալուստի խօսք արտասանեց զօրամասի հրամանատար՝ զնդ. Սեպա: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց սկաուտներուն, որոնք անկախութեան տօնին առիթով կը յիշեն բա-

նակը, կը զնահատեն եւ այս զնահատանքը կը ցուցաբերեն իրենց այցելութեամբ: Ան նաեւ նշեց, թէ ինչպէս բանակը իր պարտականութիւնը կը կատարէ՝ ապահովելով երկրին անվտանգութիւնը, նոյնպէս այլ ամէն սկաուտ պարտականութիւն ունի իբրեւ լիբանանցի անհատ՝ պահպանել բնութիւնը եւ ուշադիր ըլլալ երկրի մաքրութեան եւ օրի-



տուրն այն յոյսով, որ յառաջիկայ տարիներուն դարձեալ կը տեսնուին եւ իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն բանակին՝ իր տարած մեծ աշխատանքին համար:

ՄԱՍՆԱՃԻԴԻՆ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Բանակայիններու այցելութեան ձեռնարկը եկաւ մասնաճիւղին պաշտօնական վերամուտէն ամիս մը ետք: Արդարեւ, 2007-2008 տարեշրջանի վերամուտի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 14 Հոկտեմբեր 2007ին, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի շրջափակէն ներս: Հանդիսութիւնը սկսաւ յետմիջօրէի ժամը 5ին, շրջանէն ներս սողանցքով, Հ.Մ.Ը.Մ.ի շէփորա-

խումբին առաջնորդութեամբ, ապա սկսուաւ քոյր-եղբայրները ուղղուեցան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի դաշտը, որ ամբողջութեամբ լեցուած էր մասնաճիւղի քոյր-եղբայրներուն պատրաստած ձեռագլին աշխատանքներով:

Պաշտօնական հանդիսութեան, մասնաճիւղի ծնողներու կողքին ներկայ էին Արսէն Քհչյ. Գասապեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկսուա. Խորհուրդի ներկայացուցիչը, Շրջանային Խմբապետական կազմը, մասնաճիւղի վարչութիւնը եւ խորհուր-

դը, Գոլէճի տնօրէն եղբ. Վիգէն Աւագեան, ինչպէս նաեւ մասնաճիւղի նախկին խմբապետները:

Հանդիսութիւնը սկսաւ դրօշակի պաշտօնական արարողութեամբ, ուր շէփորախումբի քայլերգներու նուագով դրօշակները բարձրացան, որմէ ետք տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, աստիճանատուութիւն եւ վիտէօ երիզի ցուցադրութիւն: Ներկաներուն ցուցադրուեցան 2006-2007 տարեշրջանի բանակումի լուսանկարները: Հանդիսութիւնը վերջ գտաւ Սկսուա. Խորհուրդի պատրաստած հիւրասիրութեամբ, որմէ ետք Պուրճ Համուտի երկինքը լուսաւորուեցաւ զանազան տեսակի պայթուցիկներու լոյսերով:



ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻԴԻ ԱՐԻ Բ. ԽՈՒՄԲԻՆ ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ

**Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ**

Կիրակի, 4 Նոյեմբեր 2007ի առաւօտեան ժամը 11ին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի Արի Բ. խումբին մինի ֆութպոլի մրցաշարքը: Մրցաշարքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Արի Ա. եւ Բ. խումբերը, Ժրտէյտէի մասնաճիւղի Արի Ա. եւ Բ. խումբերը, Անթիլիասի մասնաճիւղի Արի խումբը եւ Պուրճ Համուտի մասնաճիւղի Արի Ա. եւ Բ. խումբերը: Վիճակաձգութեամբ որոշուեցաւ մրցաշարքին ընթացքը:

Բացումը կատարեց Պուրճ Համուտի մասնաճիւղի Արի Ա. խումբը՝ ընդդէմ Անթիլիասի մասնաճիւղի Արի խումբին: Բացման մրցումը վերջ գտաւ պուրճ Համուտցիներու յաղթանակով: Խումբը յաղթելէ ետք նաեւ Ժրտէյտէի մասնաճիւղի Արի Ա. խումբին, հասաւ աւարտական: Մասնաճիւղին Բ. խումբը, որ վիճակաձգութեամբ հասած էր կիսաւարտական, իր կարգին, յաղթելէ ետք Պէյրութի մասնաճիւղի Արի Ա. խումբին, հասաւ աւարտական: Հետեւաբար, աւարտական խաղը իրարու դէմ հանեց Պուրճ Համուտի Արի Ա. եւ Բ. խումբերը: Բուռն պայքար մղելէ ետք, Արի Բ. խումբը տարաւ յաղթանակը: Մասնաճիւղին միաւորի խմբապետուհին բաժակը յանձնեց ախոյեաններուն: Ապա, ցնծութեան միջնորդի մէջ տօնուեցաւ յաղթանակը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ԱՄՍԵԼՕ

ՀՄԸՄ-ի Արմերոյի մասնաճիւղը սկսուողական տարեկան իր բանակումը կատարեց 60 հոգիով՝ 30 սկսուողներ եւ 20 երախաներ, «Անի» Հայ Մշակութային Միութեան փոքրիկներ:

Բանակումին վերջին օրը տեղի ունեցաւ սկսուողական երդման արարողութիւն եւ խարուկահանդէս, ներկայութեամբ Հոյանտայի Հայրապետական Պատուիրակի փոխանորդ Տաթև Վրդ. Յակոբեանի եւ սկսուողներու ծնողներու:

Եռօրեայ բանակումը ունեցաւ սկսուողական ճորտ յայտագիր: Բանակողները իրարմէ բաժնուեցան լաւ տպաւորութիւններով եւ հաճելի յիշատակներով:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Չուարթ Տեմիրձեան ԱՄՍԱՆ

ՀՄԸՄ-ի Ամմանի մասնաճիւղը տարեկան իր բանակումը կատարեց 11-15 Հոկտեմբեր 2007ին, Ամմանէն 1.5 ժամ հեռու գտնուող Շաթանա գիւղին լատիւններու վանքին մէջ:

Շաթանայի բանակավայրը նորութիւն էր ՀՄԸՄ-ի սկաուտներուն համար, որոնք խանդավառ եւ յիշատակելի պահեր ապրեցան իրենց պատասխանատուներուն հետ: Բանակումին մասնակցեցան 55 սկաուտներ:

Խմբապետական կազմը եւ Բ. կարգի սկաուտներէն երկու խմբակ օր մը առաջ մեկնեցան բանակավայր, ուր տեսան անհրաժեշտ պատրաստութիւններ:

Յաջորդ առաւօտեան իրենց միացան արի-արենոյճներն ու գայլիկները:

Գայլիկներն ու սկաուտները հինգ օրուան տեւողութեան ունեցան յատուկ յայտագիրներ: Ամէնէն հետաքրքրականը եղաւ դէպի գիւղ արշաւը: Բանակողները այցելեցին գիւղացիներու բնակարանները եւ ծանօթացան անոնց գիւղին եւ կեանքին: Նորութիւն էր իմանալ, որ Հայկական Յեղասպանութենէն ետք բազմաթիւ հայեր ապաստանած էին Շաթանա: Շատեր տուն-տեղ ապահոված էին գիւղացիներու մօտ, իսկ հիւանդ եւ տկար հասնողներ մահացած եւ թաղուած էին գիւղին շրջակայքը:

Բանակումին դաստիարակչական յայտագիրը եղաւ շատ ճոխ եւ ընդգրկեց հետեւեալ նիւթերը.-

● ՀՄԸՄ-ի համագաղութային կառույցը:

● Սկաուտական սուլիչներ եւ պահակութիւն:

● Յորդանանի հայ գաղութին կազմութիւնը:

● Սարգիս Կուկունեանի արշաւանքը:

● Կոմիտաս Վարդապետի եւ Խրիմեան Հայրիկի կեանքերը:

● Հայկական Յեղասպանութեան մասին օտար վկաներու եւ պատմաբաններու վկայութիւնները:

● Հայկական միութիւններու եւ կուսակցութիւններու ծանօթացում:

Բանակումը աւարտեցաւ աւանդական խարուկահանդէսով: Կրտսեր գայլիկները իրենց ծնողներուն հետ ճամբէէ ետք, յաջորդ օր յայտագիրը շարունակուեցաւ մինչեւ կէսօր: Բանակողներ չուզեցին հեռացան բանակավայրէն, յոստայրով որ միշտ կը կրկնուին նման յաջող եւ օգտաշատ բանակումներ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒՒՅԹԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ ՉՈՐՍՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Յովհաննես Սերրբեան
ԲՈՒՒՅԹ

Հ.Մ.Ը.Մ.Ի Բուլեթի մասնաճիղին սկսուող փունը տարեկան իր բանակումը կատարեց 11-14 Հոկտեմբեր 2007ին, պետական բանակավայրի մէջ, մասնակցութեամբ 150 սկսուողներու:

Բանակումը կ'առաջադրեր սկսուողական տեսական գիտելիքները ամրապնդել գործնական աշխատանքներով:

Բանակումին յայտագիրը ծոխ էր եւ այլագան. ձեռային աշխատանքներու պատրաստութիւն, զարգացման եւ մարզական մրցումներ, սկսուողական նիւթերով դասախօսութիւններ եւ այլն:

Բանակումին ընթացքին տեղի ունեցաւ խարուկահանդէս: Ներկայ էին ազգային մարմիններու ներկայացուցիչներ, Առաջնորդ Կորին Արք. Պապեան եւ ծնողներ:

Խարուկահանդէսին ընթացքին տեղի ունեցաւ սկսուողական կարգերու տուչութիւն եւ վկայագիրներու բաշխում: Այս առիթով խօսք արտասանեց մասնաճիղի ատենապետ եղբ. Գեորգ Չաղյասեան: Ան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի ծառայութիւնները եւ աշխատանքները գաղութին մէջ, նաեւ դերը՝ մատղաշ սերունդներու դաստիարակութեան մէջ:

Խօսք արտասանեց նաեւ Կորին Արք. Պապեան:





Բանակիրներն ղսատիարակչական յայտագիրներու պահում:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹՔՆՔԻ ԵՒ ԳՈՔԻՆԻՈՅ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԾՈՂԱՆՑՔԸ

Լոռի Պարագեան ԱՌԵՆՔ

2007 ին եւս, տպաւորիչ ներկայութեամբ, Հ.Մ.Ը.Մ.Ի Աթէնքի եւ Գոքինիոյ սկառուտական կազմերը տողանցեցին Յունաստանի ազգային տօնին առիթով, Նէա Ջմիռնիի եւ Նիֆէայի քաղաքապետարաններուն կողմէ կազմակերպուած տարեկան տողանցքներուն:

Երկու մասնաճիւղերէն ալ մասնակցեցան մըջնիկներ, գայլիկ-արծուիկներ, սկառուտ-արենոյճներ, երէց-պարմանուհիներ եւ խմբապետական կազմը՝ սկառուտական պաշտօնական տարազով եւ Եռագոյն փողկապով:

Աթէնքի մասնաճիւղը մասնակցեցաւ 60, իսկ Գոքինիոյ մասնաճիւղը՝ 80 տարագաւորներով:

Չոյգ տողանցքներու աւարտին, Ֆիքսի «Արամ Մանուկեան» եւ Գոքինիոյ «Զաւարեան» ակումբներէն ներս տեղի ունեցան խմբաւորումներու փոխանցման արարողութիւններ, որոնց ընթացքին մըջնիկներ դարձան գայլիկ, գայլիկներ՝ սկառուտ եւ սկառուտներ՝ երէց: Ապա, տեղի ունեցան գայլիկներու խոստման, սկառուտներու եւ երէցներու երդման արարողութիւններ, ինչպէս նաեւ՝ սկառուտներու պաշտօնատու-



չութեան հանդիսութիւններ:

Աթէնքի մասնաճիւղի խոստման եւ երդման արարողութիւններուն, Եռագոյն փողկապները քոյրերուն եւ եղբայրներուն փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբայր Յարութիւն Մանուկեան:

Թէ՛ Աթէնքի եւ թէ՛ Գոքինիոյ սկառուտական կազմերուն գործունէութիւնները փակուեցան ակումբէն ներս դրօշակի աւանդական արարողութիւններով:



«ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Մարալ Կենդոյեան ԳԱՄԻՇԼԻ

ՀՄԸՄ-ի Գամիշլիի գրասենեակին մէջ կազմակերպուած հանդիպումի մը ընթացքին, վաստակաւոր ՀՄԸՄ-ական եղբ. Վարդգէս Սիմոնեան արժանացաւ «Մառայութեան» շքանշանի:

Շքանշանի տուչութեան ներկայ գտնուեցան ՀՄԸՄ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութիւնը, Սկառուտ. Խորհուրդը եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Մկրտիչ Գրիգորեան: Ներկաները շնորհաւորեցին պարգե-



ւատրեալ եղբայրը եւ քաջառողջութիւն ու յարատեւութիւն մաղթեցին անոր:

ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ

Վաստակաւոր եղբ. Վարդգէս Սիմոնեան ՀՄԸՄ-ի շարքերուն անդա-

մակցած է 1947ին, իբրեւ դայիկ, ապա՝ սկառուտ: Եղած է Սկառուտ. Խորհուրդի անդամ, 1957-1963՝ «Արեւելք-Մարգաշխարհ» ամսաթերթի թղթակից:

Եղբ. Սիմոնեան մասնակցած է ՀՄԸՄ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմակերպած մարզական եւ սկառուտական դպրոցներուն, 1959ին: Մաս-

նակցած է բազմաթիւ բանակումներու: 1961-1979, ան մաս կազմած է ՀՄԸՄ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան, իսկ 1979-1982 եղած է ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ:

With the compliments of

Restaurant Al-Mayass

ԵՂԲ. ՍԵՐԳՕ ԻՍԿԱՀԱՏԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ

Կարպիս Գույումճեան ԱՅԵՆՔ

2 007ին, Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի ընտանիքը իր վեթերան եղբայրներէն Փանոսի, Աբրահամի, Պօղոսի եւ Պետրոսի կորուստէն ետք, ունեցաւ նաեւ անակնկալ այլ կորուստ մը, որ մեծ ցաւ պատճառեց բոլորին:

Յաւէտ մեկնող մեր բոլոր եղբայրները պիտի ապրին մեր յուշերուն մէջ: Անոնք պիտի հրճուին տեսնելով յարածուն գործունէութիւնը միութենական իրենց եղբայրներուն, որոնք իրենց ճամբէն քալելու ուխտը ըրած են:

Եղբայր Սերգօ ծնած էր Յիքսի հայ գաղութը, 1932ին: Յաճախած էր գաղթական Ս. Կարապետ եկեղեցի-դպրոցը: Ամուսնացած էր Սոնիա Պոյաճեանի հետ եւ բախտաւորուած երկու զաւակով՝ Լեւոն եւ Մէյրի:

Անվարան կարելի է ըսել, որ եղբ. Սերգօ, իր ամբողջ կեանքին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր աշխատանքներուն մէջ, առաջնահերթ ու գործնական ներկայութիւնը եղաւ:

Ան իր փոքր տարիքէն եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկ, սկաուտ, մարզիկ, մասնաճիւղի եւ Շրջանային Վարչութեան անդամ: Մասնակցեցաւ սկաուտական բանակումներու եւ Ներկայացուցչական, Պատգամաւորական, դիւանական բազմաթիւ ժողովներու, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքը:

Հ.Մ.Ը.Մ.էն ներս, եղբ. Սերգօյի ունեցած վարչական-կազմակերպչական յարատեւ գործունէութեան առ ի գնահատանք, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը զինք արժանացուց «Մառա-



Անցեալին, ծննդեան եւ Չատկուան տօներուն առիթով, Աթէնքի եւ Սելանիկի մէջ, մարզատեղիներու ընկերակցութեամբ եւ մեծ խանդավառութեամբ, արշաւներ տեղի կ'ունենային Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի եւ Սելանիկի պասքէթպոլի տղոց եւ աղջկանց խումբերուն միջեւ, բաժակի մրցումներ եւ հաւաքոյթներ՝ հայաշունչ մթնոլորտի մէջ:

Նկարը՝ 1952ին, Սելանիկի մէջ, Աթէնքի յաղթական տղոց խումբին պարգևատրումը:

Չախտն աջ կ'երեւին Մանուկ Գասպարեան, Օննիկ Իսիրիկեան, Գրիգոր Ալթունեան, Խաժակ Դաճիպօղոսեան, Սկրտիչ Տէօնեան, բաժակը ստացող խմբապետ Սերգօ Իսկահատեան, Լեւոն եւ Թագուի Գայեան ամուլը, բաժակը յանձնող Հ.Մ.Ը.Մ.ի Սելանիկի մասնաճիւղին ատենապետ եղբ. Խաչիկ Բարթեմեան, Վահագն Աբրահամեան եւ Սերգօ Յովհաննէսեան:

յութեան» շքանշանի:

Եղբայր Սերգօյին յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Նէոս Գոգմոսի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ բազմաթիւ սգակիրներու եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու: Դազաղը ծածկուած էր Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով: Դազաղին կողքին պատուի կանգնած էին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներն ու արենոյշները:

Արարողութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին կողմէ եղբ. Յակոբ

Եթիմեան դամբանական խօսքով մը անդրադարձաւ եղբօր կեանքին եւ Հ.Մ.Ը.Մ.ին ունեցած ներդրումին:

Ապա, ան Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ ցաւակցութիւններ յայտնեց հանգուցեալին կողակիցին եւ զաւակներուն:

Եղբայր Սերգօ, Հ.Մ.Ը.Մ.էն ներս տարիներ շարունակ հետք գործակցելու, յուզումով կարողացայ գրել այս քանի մը տողերը քեզի համար:

ՀԵԹԻԱԹ

ՉԻԻՆԵՐՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ՍԱԽԱՅՑՆԵՐՈՒ ԹԱԳԱԲՈՐԸ

Չիւներու թագուհին կը բնակէր պսպղուն ձիւներով շինուած պալատի մը մէջ: Պալատը պաշտպանուած էր հսկայ ձիւնեմարդու մը կողմէ, որ կատաղօրէն ձիւնեգնդակ կը նետէր անոր մօտեցողներուն:

Ձիւներու թագուհին ունէր մոգական մատանի մը, որ զինք զօրաւոր կը դարձնէր: Ան շատ կը սիրէր ամբողջ շրջանը ծածկել ձիւնով: Ոչ միայն կը վայելէր այդ գեղեցիկ տեսարանը, այլեւ՝ կը կարծէր, թէ հաճելի է մարդիկը ձիւնով անհանգստացնել:

Բլուրին միւս կողմէ կ'ապրէր սառույցներու թագաւորը, որուն պալատը ամբողջութեամբ շինուած էր շարք-շարք դասուած սառույցի սրածայր կտորներով: Թագաւորը կը նախանձէր, որ իր դրացին կրնար այդքան տակնուվրայութիւն ստեղծել եւ կ'ուզէր տիրանալ անոր մոգական մատանին: Երկար մտածելէ ետք, սառույցներու թագաւորը իր հաւատարիմ եղիամին հետ ուղղուեցաւ ձիւներու թագուհին պալատը:

Ձիւնեմարդը տեսաւ զանոնք, պատրաստուեցաւ ձիւնեգնդակ մը նետելու, սակայն սառույցներու թագաւորը պոռաց. «Կ'աց, աշակերտները ձիւնեմարդ չինելու մրցում ունին եւ կ'ուզեն, որ դուն ըլլաս թագաւորը»:



հիւսիսային հովը աճապարանքով մեկնեցան, իսկ սառույցներու թագաւորը եւ եղիամը լծուեցան գործի: Անոնք շուտով պալատին մուտքը ծածկեցին սառույցի հաստ խաւով: Քիչ ետք ձիւներու թագուհին որոշեց դուրս ելլել եւ քիչ մը աւելի ձիւն տեղացնել: Սակայն հազիւ քայլ մը առած՝ ան սահեցաւ եւ գետին ինկաւ: Մոգական մատանին սահեցաւ անոր մատէն:

Յաջորդող քանի մը օրերուն սառույցներու թագաւորը սքանչելի ժամանակ անցուց: Սառնամանիք էր օդը հետզհետէ աւելի ցրտեց: Ինքնաշարժներ ճամբաներուն գրայ սահեցան եւ ջուրի խողովակներ ճաթեցան: Տանիքներէն հոսող ջուրը սառույցի վերածուեցաւ եւ մարդիկ ամուր փակեցին դուռ ու պատուհան:

Սառույցներու թագաւորը երջանիկ էր, սակայն ան ուզեց տիրանալ նաեւ ձիւներու թագուհին պալատին: Անգամ մը եւս սառույցներու թագաւորը եւ եղիամը ճամբայ ելան դէպի բլուրին միւս կողմը, սակայն ձիւներու թագուհին եւ իր զօրքը պատրաստ կը ըստպատէին:



Ձիւնեմարդը եւ Պ ա տ Ե ր ա գ մ Ը





սկսաւ ձիւներու թագուհին պարտաին տիրանալու համար եւ ձիւնամրրիկն ու փոթորիկը յաջորդեցին իրարու: Մարդիկ չէին հասկնար, թէ ինչ կը պատահէր: Կռիւի ժամանակ ձիւնեմարդը սահեցաւ ու ինկաւ: Յաղթական սառույցներու թագաւորը բարձրացուց իր սուրը եւ մատանին ինկաւ ձեռքէն:

Ամէն մարդ արձանացաւ, երբ արեւը իր ճառագայթը երկարեց, երկարեց... յափշտակեց մատանին եւ գայն իր մատը անցուց: «Հիմա ես եմ ամէնէն զօրաւորը», - ըսաւ ան, - «բաւական վայելեցինք այս ցուրտ օդը: Ասկէ ետք դարուն պէտք է ըլլայ»:

Արեւը իր տաք մատներով դպաւ սառույցներու թագաւորին, ձիւներու թագուհիին եւ անոնց օգնականներուն, որոնք մէկ առ մէկ հալեցան:

Ի՞նչ կ'ը փԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ

ՈՒՍՈՒՑԻՉ


Ամէն մարդ որոշ տարիքի մը կը փափաքի ուսուցիչ կամ ուսուցչուհի ըլլալ: Սակայն, հետագային, բոլորը չէ որ դէպի ուսուցչու թիւն կ' ուղղուին:

Ժամանակին, ուսուցիչ ըլլալու համար կը բաւէր որ մարդ մասնագիտանար նիւթի մը մէջ եւ վկայականի մը տիրանար: Այսօր, ինչպէս ամէն բան, ուսուցչու թիւնը եւս կատարելագործուած ասպարէզ է: Չի բաւեր որ մարդ միայն իր դասաւանդելիք նիւթը գիտնայ, ան պէտք է տիրացած ըլլայ նաեւ դասաւանդման յատուկ վկայականի: Ծանօթ ըլլայ մանկավարժական հիմնական սկզբունքներու եւ գիտնայ արդի արհեստագիտական միջոցները լաւապէս օգտագործել դպրոցէն ներս:

Ուսուցիչը իր նիւթին լաւապէս տիրապետած եւ անոր կապուած նորութիւններուն հետեւող մարդն է, որ նկարագրով պէտք է ըլլայ համբերատար եւ հոգատար:



ԿԱՏՈՒՆ



դիւրութեամբ շրջելու գիշերը, ինչպէս ցերեկը:

Կատուն բացառիկ լսողութիւն ունի: Ան կրնայ լսել նոյնիսկ ամէնէն թեթեւ ձայնը: Անոր ականջը կրնայ «որսալ» այն շատ սուր ձայները, զորս մարդ արարածը անկարող է լսելու: Երբ մութ գիշերուան մէջ կատուն 15 մեթր հեռու գտնուող մուկ մը թեթեւ ձայն հանէ, կատուն կը լսէ գայն:

Գիշերը կատուն պեխերը շատ օգտակար են իրեն համար: Երբ ան կը քսուի սեղանի մը, աթոռի մը կամ ծաղկամանի մը, անոր երկար պիրկ թելերը գայն կը քննեն զգուշութեամբ:

Այս ձեւով կատուն կը զանազանէ առարկային շրջագիծերը եւ ձեւը:



ՅԱՆՇԵԼՈՒԿ


Ո՞վ է, ի՞նչ է: Տունը փոքրիկ, մուտքը մեծ, միայն ինքն է տանը մէջ: (Պատասխանը՝ յաջորդիկ: Նախորդ հանելուկին պատասխանն էր

ժամացոյցի սլաքներ):

Գիշերուան թագաւորը՝ կատուն մութէն չի վախնար: Ընդհակառակը, անոր չափազանց լաւ զարգացած զգայարանները կարելիութիւնը կու տան անոր



1943-2008)



ԷԼԻ ԴՈՒԼԻԶՅԱՆ

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱՋԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուիս բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱԳԱԳՆԵՐԸՆ Ազատուիի Դանիելեան, Վահրամ Դանիելեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տեր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլեան, Յակոբ Թորքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԵՆ Վաղարշ Էիրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Զաճեթեան, Լեւոն Մելքոնեան, Զրանդ Տետեան, Արթին Մաժակեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքըրճեան, Բարգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան, Գառնիկ Նազարեթեան, Ճորճ Չաքարեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱԼԸՆ Ճորճ Տաքեան:


www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Ամերիկացի մարզիկը, որ բոլոր ժամանակներու մեծագոյն լուղորդը կը նկատուի:
2. Իգական անուն - Ազահօրէն ուտել:
3. Բազմութիւն - Պարտք - Յուցական ածական:
4. Իգական օտար անուն - Բախուկ:
5. Զուլիցերիական ժամացոյցի վաճառանիչ մը - Ամբողջական հայ:
6. Զայնակից տառեր - Կտրոց:
7. Վրաստանի գետերէն:
8. Ուռիլ, սոնքալ - Իգական օտար անուն:
9. Եչիլ Լրմաք գետին պատմական անունը - Դազաղ:
10. Դիւրահաղորդ - Պարսաւ, եպերանք:
11. Բուրդ - Լիբանանահայ մամուլէն - Յուցական ածական:
12. Տեղափոխուած գիրեր - Կարաւանի առաջնորդ՝ արու ուղտ - Կաքաւազգի թռչուն:
13. Խայխայ, ոտնապարանջան - Մանգաղի կոթ:
14. Յուցական ածական - Որփայի եւ Հուլիի կեսուրը - Հայրենի կուսակցութիւն:
15. Շաղկապ - Թագաւոր - Թմբեցուցիչ հիւթով բոյս - Պարտիզպանի գործիք:
16. Անառակ - Կզակ - Թիկունք:
17. Վատատոհմիկ - Լիբանանի գետերէն:
18. Կրկնուած բաղաձայններ - Արաբ իշխան:
19. Սթեր, վայրի նարդոս - Աղաղակէ՛:
20. Կրթիչ, շահեկան - 2007ի լաւագոյն մարզիկը՝ Լատ «ՖիՖԱ»ի:

ՈՒՂԱՀԱՅԵԱՅ

1. Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ական քոյրը - Օղափոխութեան վայր - Առիւծի մազ:
2. Հայ նահապետ - Աստղազարդ - Զայնանիչ:
3. Պնդագլուխ - Կրկնուած բաղաձայններ - Բանի մը դիմաց:
4. Կրկնուած բաղաձայններ - Յուցական ածական - Էմիլ Զոլայի երկերէն - Վշտանայ:
5. Համեմատ - Սեռային մոլուցք - Մարդ արարած - Ժխտական պատասխան:
6. Լման իրաւասութեամբ օժտուած անձ - «Ֆորմիլա 1»ի 2007ի աշխարհի ախոյեանը:
7. Մարմանդ, ճարակատեղի - Նմանապէս:
8. Արական օտար անուն - Մէկու մը դէմ չարիք նիւթել - Իրերայաջորդ տառեր:
9. Բանջարանոցի ածու - Խաղաթուղթի մէկնոց - Վտակ:
10. Կրկնուած բաղաձայններ - Ծիծաղիլ կամ ծաղրել - Սատակ:
11. Ափրիկեան երկիր - Լիբանանցի հանգուցեալ կուսակցապետ եւ Պէյրութի երեսփոխան:
12. Աղէկնալ - 1854ին Մոսկուայի մէջ կազմուած գրական ընկերակցութիւն:
13. Վայելուչ, շնորհայի - Հայ գուսան - Արաբական երկիր:
14. Երեւելի, նշանաւոր - Կաթնտու - Այբուբենէն:
15. Տերեփուկ - Կոնաբեր ծառ - Կիտուած (հակ.):



ԹԻԻ 165 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	Օ	Ր	Լ	Ա	Ն	Տ	Օ	Մ	Է	Ճ	Ի	Ք							
2	Շ	Ե	Ա	Խ		Ա	Ղ	Ա	Թ	Ո	Ն								
3		Ա	Ն	Տ	Ա	Լ	Բ	Տ	Ա			Ք	Ա						
4		Կ	Ա	Տ	Ա	Ր						Օ	Ն	Ս					
5	Պ	Ս	Ա	Կ	Ա	Ի	Ո	Ր				Դ	Ե	Ր					
6	Վ	Ա	Ռ	Ն	Ա	Ո	Ի					Ի	Կ						
7	Ի	Ն	Ի		Ն	Ա	Ր	Ե	Կ					Մ					
8	Շ	Ն				Ս	Ք	Ո	Թ	Ս	Փ	Ի	Տ						
9	Վ	Ա	Չ			Խ	Տ	Ի	Ղ	Տ	Ե	Տ	Ր						
10	Ա	Ն				Ո	Լ	Ո	Ի	Ր	Թ		Ո						
11	Ն	Ա	Խ			Ս	Վ		Ք		Ա	Ր	Ե	Ի					
12	Ա	Ր	Ժ	Ա	Ն	Ա	Ն	Ա	Լ	Բ	Բ	Ո	Ի	Կ					
13	Թ	Ի	Ա	Կ		Ս	Ա	Յ	Ա	Թ	Ն	Ո	Վ	Ա					
14	Ա	Բ	Ա	Ն	Ա	Կ		Տ	Ի	Ա	Ն	Ա	Թ						
15	Ն	Շ	Ա	Ն	Յ	Ս	Ի	Ն	Չ		Ն	Շ	Է						
16	Ա	Շ	Ն	Ա	Ն	Ա	Յ	Ի	Ն		Ի	Ր	Ա	Ն					
17	Ն		Ե	Տ	Հ	Ա				Ր	Ո	Տ	Ի	Ն					
18	Ա	Յ	Լ		Պ	Յ					Կ	Ի	Կ	Օ					
19	Ն	Ա		Կ	Ա	Ս	Տ				Ն	Ո	Ա	Ս					
20	Տ	Ր	Ո	Կ	Պ	Ա					Օ	Մ		Օ	Ր				



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՆՏԱՏԻ ՊԱՍՔԵԹ-ՊՈՒԻ ԽՈՒՄԲԸ